

Մեր Անկիտեն

ԱԲԵԼԻ ՔԱՆ
ՄԻԱՍՆԱԿԱՆ, ԱԲԵԼԻ
ՔԱՆ ԶՕՐԱՑԱԾ

ՏՕԲԹ. Ա. ԳԱԶԱՆՃԵԱՆ

2009, Կիրակի Մարտ 1-ին, Երեւանի Ազատութեան հրապարակի վրայ տասնեակ հազարաւոր ցուցարարներ, ոգեկոչեցին տարի մը առաջ հայրենի ապահովութեան ուժերու եւ հայրենադաւ վարձկան մարդորսորդներու գնդակներուն տակ նահատակուած տասը անմեղներու անկողնէն յիշատակը: Անոնք ինկած էին, հայրենիքէն մեքս ժողովրդավար կեանքի վերհաստատման պահանջատիրութեան նախադրեալները: Նաեւ, Մարտ 1-ի հանրահաւաք, դարձաւ հաւատարմութիւն՝ անոնց թափած արեան, անմեղացորդ խոստում՝ անոնց անվիատ, սրբազան պայմարի շարունակման:

Ինչպէս միշտ բազմամարդ, օրինապահ ու միասնական՝ հանրահաւաքի մասնակիցները ցաւով հաստատեցին, թէ թափուած արիւնը, դոյզն առիթ դարձաւ իշխանութիւններուն՝ ինքնագիտակցութեան գալու, ինքնասրբագրելու եւ կառուցողական նախաձեռնութիւններ վերցնելու, հայրենիք դուրս բերելու համար ուղեկորոյս փակուղիէն:

Ընդհակառակը՝ իշխանութիւնները կրկնակի գորացուցին մեղու մը ընդդիմութեան շարժումը վրայ: Շահագործեցին 2008-ի հանրահաւաքին ինկած գոհերուն դառնադէտ իրողութիւնը, պատասխանատուութիւնը բեռնեցին ընդդիմադրութեան ուսերուն վրայ, որպէս թէ կարգ ու կանոն ստեղծելու համար երկրէն մեքս:

Անոնք հաստատեցին ստիպողական վիճակ: Ճնշեցին հաւաքները: Սեղմեցին խօսքի եւ մամլոյ ազատութիւնը: Սպառնալիքներու ենթարկեցին գործատերեր, պետական ու կրթական պաշտօնեաներ, պարզ քաղաքացիներ, որոնք կրնային ընդդիմադիր հայեացքներ կամ կայքեր ունեցած ըլլալ: Այսօր, կան ձերբակալուած արեւի քան հարիւր քաղաքական գործիչ... քանտարկեալներ, որոնց քանտարկումի դէմ առնուած է ազատագրման վնաս, իսկ մնացեալները, այսօր տարի մըն է կ'սպասեն իրենց դատավարութեան վնասական աւարտին: Անշուշտ, այս կոպիտ միջնադարեան միջոցառումներէն անմասն պիտի չմնային դիւանագիտական ոլորտները: Ընդդիմադիր հայեացքներ ունեցող արտակարգ դեպքակներու դէմ առնուեցան կամայական պաշտօնագրկամ տնօրինումներ:

Մարտ 1-ի նահատակներուն

ՄԱՐՏ 1-Ի ՄՊԱՆԴԻ ՏԱՐԵԼԻՑԻՆ ԱՌԹԻ ԲԱԶՄԱՐԱԶԱՐԱՆՈՑ ԶԱՆՐԱՅԱԲԷ ԵՒ ԵՐԹ ԵՐԵԻԱՆԻ ՄԷՋ ՄԻԶԱԶԳԱՅԻՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԸ ԿԸ ԴԱՏԱՊԱՐՏԵՆ ԶԱՅԱՍՏԱՆԻ ԻՇԽԱՆՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ ՎԱՐՔԱԳԻԾԸ

Կիրակի Մարտ 1-ին, Հայ ժողովուրդը նշեց տարի մը առաջ քոչարեանական աւագակներուն կողմէ ի գործ դրուած սպանդի առաջին տարեկիցը: Հակառակ իշխանութիւններու գործադրած բոլոր ջանքերուն, տասնեակ հազարաւոր երեւանցիներ մասնակցեցան Մատենադարանի առջեւ Հայ Ազգային Գոնկրէսի կազմակերպած հանրահաւաքին ու անոր յաջորդած երթին:

Մարտ 1-ի նախօրեակին հրապարակուեցան նաեւ երկու տեղեկագիրներ՝ Մարդակալին իրաւանց Հսկիչի (Human Rights Watch) եւ Միացեալ Նահանգներու Պետական Քարտուղարութեան կողմէ, խիստ քննադատութեան արժանացնելով Հայաստանի իշխանութիւններու վարքագիծը՝ մարդկային իրաւունքներու եւ ազատութիւններու ծիրէն ներս:

Սկսելով հանրահաւաքէն, Հայ Ազգային Գոնկրէսի համակարգող Լեւոն Զուրաբեան բացման խօսք կատարելով, թուարկեց Մարտի 1-ի 10 գոհերու անունները, եւ հանրահաւաքի մասնակիցները, բոլորեցնելով վեր պարզած, մէկ ըստ մէկ թուութեամբ յարգեցին անոնց յիշատակը:

ՏՈՒՆԻ ՏԱԳՆԱՊ ԵՐԵԻԱՆԵԱՆ ՇՈՒԿԱՅԻ ՎՐԱՅ



Երեւանի մէջ դրամի փոխանակման կէտերէն մէկուն գիններու ցուցատախտակը

Վերջին օրերուն Երեւանի մէջ ստեղծուած է տոլարի տագնապ: Պահանջարկի դիմաց տոլարը գրեթէ անգտանելի դարձած էր: Փոխանակման կէտերու առջեւ նկատելի էին երկար հերթեր՝ տոլարի գինի բարձրացման մասին շրջող լուրերու հետեւանքով: Նոյնիսկ դրամատուներէն ներս կարելի չէր 100 կամ 200 տոլար գտնել:

Մի քանի օր այսպէս շարունակուելէ ետք, Մարտ 3-ին, Հայաստանի Կեդրոնական Պանքի խորհուրդը, արտահերթ նիստի մը ընթացքին որոշում կայացուց վերադառնալ «լողացող» փոխար-



Սեւ դրօշը կը ծածանի Մատենադարանի առջեւ համախմբուած ժողովուրդի վերեւ


Օրուայ միակ ելույթ ունեցողն էր Հայաստանի առաջին նախագահ Լեւոն Տէր-Պետրոսեանը:

«Զեղանից շատերը մեծ յոյսեր են կապել այս հանրահաւաքի հետ, այն դիտելով որպէս համաժող-

ղովրդական պայքարի նոր ալիքի կամ վճռական գործողութիւնների սկիզբ: Իսկ վճռական գործողութիւնների տակ հասկացուած են

Շաբ.ը էջ 4

ԶԱՅ ԱՄԵՐԻԿԵԱՆ ԽՈՐՀՈՒՐԴԸ ԿԸ ԶՐԱՊԱՐԱԿԵ ԿԼԵՆՏԵԼԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴԻ ԸՆՏՐՈՒԹԻՒՆՆԵՐՈՒՆ ԻՐ ԶՕՐԱԿՑՈՒԹԻՒՆԸ ՎԱՅԵԼՈՂ ԹԵԿՆԱԾՈՒՆԵՐՈՒ ՑԱՆԿԸ



Ապրիլ 7-ին Կլէնտէլի մէջ մէջ տեղի ունենալիք քաղաքապետարանի ընտրութիւններուն առթիւ, Հայ Ամերիկեան Խորհուրդը (ՀԱԽ) հրապարակեց իր գորակցութիւնը վաչկու թեկնածուներու ցանկը:

Քաղաքապետական Խորհուրդի երեք տեղերուն համար ՀԱԽ կը պաշտպանէ համայնքային գործիչ եւ Կլէնտէլի ոստիկանութեան հասարակական կապի նախկին բանբեր Շահէ Քէրոլլեանի, քաղաքապետական Խորհուրդի այժմու անդամ Ֆրէնք Քուինթէրոյի եւ Կլէնտէլի շինարարական ծրագիրները ուսումնասիրող յանձնախումբի նախկին անդամ Վարդան Կարապետեանի թեկնածութիւնները:

Անցնող մի քանի ամիսներուն, ՀԱԽ-ի ընտրական յանձնախումբը առանձին հանդիպումներ ունենալով իւրաքանչիւր թեկնածուի հետ, ուսումնասիրած է այս թեկնածուներու տեսակէտներն ու ծրագիրները, գալով այն եզրակացութեան որ, այս երեք թեկնածուները լաւագոյնս կրնան պաշտպանել ամերիկահայ համայնքի շահերը եւ նպաստել քաղաքի ընդհանուր բարօրութեան:

Այս գորակցութիւններու կողքին ՀԱԽ լայն աշխատանք կը տանի Հայ համայնքի անդամները ծանօթացնելով ընտրական գործընթացի մասին, օգնելով արձանագրութեան աշխատանքներուն եւ քաջալերելով զանոնք՝ որպէսզի կատարեն իրենց քաղաքացիական պարտականութիւնը:

ՎԱՅԱՏԱՆԵԱՆ ՄԱՍԻՍ

ԲԱՆԱԿԷՆ ԱԻԱՐՏՈՒԵՑ

ՀՀ առաջին նախագահ Լևոն Տէր-Պետրոսեանը, 2007-ի սեպտեմբերի 21-ին վերադառնալով քաղաքականութիւն, բազմաթիւ ելոյթներ է ունեցել: Մովորաբար ես այդ ելոյթների բովանդակութեան 90 կամ 95 տոկոսին համաձայն եմ լինում եւ այստեղ, այս սիւնակում գրում եմ այն 10 կամ 5 տոկոսի մասին, որն, իմ կարծիքով, վիճելի է: Բայց քանի որ վերջին՝ 2009-ի Մարտի 1-ի ելոյթի հետ ես համամիտ եմ 100%-ով, ինձ մնում է այստեղ միայն մէջբերել ելոյթի այն մտքերը, որոնք, համոզուած եմ, կարելի է գետնի վրայ քաղաքագիտութեան դասագրքերում:

Բայց մինչ այդ՝ երկու փոքրիկ նկատառում. 1) Տէր-Պետրոսեանը պէտք է մի փոքր աւելի յաճախ ելոյթ ունենայ, որպէսզի ընդդիմադիրների տարատեսակ ելոյթները կամ յօդուածները մեզ՝ քաղաքացիներին, լրագրողներին թիւրիմացութեան մէջ չզգեն, 2) երբ արմատական-յեղափոխականները կրկին կը ցանկանան ինձ հետ վիճել՝ հանդէս գալով Շարժման կամ կոնգրեսի անունից, ես հանգիստ խղճով կարող եմ նրանց ինդիքել՝ «կարդացէ՛ք ձեր լիդերի ելոյթը»:

Յատկապէս ուզում եմ նրանց, ինչպէս նաեւ բոլորի ուշադրութիւնը հրահրել ՀՀ առաջին նախագահի հետեւեալ գաղափարների վրայ:

«Ապստամբութեան կամ յեղափոխութեան հնամաշ գաղափարները պէտք է վերջնականապէս դուրս մղուեն մեր երկրի քաղաքական օրակարգից: Քանի դեռ դա տեղի չի ունեցել, Հայաստանը իրականում, ժողովրդավարական պետութիւն դառնալու հեռանկար չի կարող ունենալ: Պատմութեանը գրեթէ յայտնի է որեւէ յեղափոխութիւն,

որի արդիւնքում ժողովրդավարութիւն ծնուի: Յեղափոխութեան արդիւնքում, սովորաբար, մի բռնապետութեանը փոխարինում է մի այլ բռնապետութիւն, որովհետեւ ուժով նուաճուած իշխանութիւնը այլ կերպ՝ քան ուժով, հնարաւոր չէ պահպանել»:

«Յաջողութեան հասնելու միակ գրաւականը մենք դիտում ենք դիտակից քաղաքացիական հասարակութեան ձեւաւորումը եւ լուրջ, պատասխանատու, ինստիտուցիոնալ ընդդիմութեան ստեղծումը, որը պատրաստ է յամառ, թէկուզ երկարատեւ, պայքարի»:

«Պէտք է մէկանգամ ընդմիջտ գիտակցել հետեւեալը: Իւրաքանչիւր քաղաքական ուժ ինքն է որոշում իր օրակարգն ու մարտավարութիւնը: Ինչպէս արդէն ասուեց, նա, անշուշտ, չի կարող հաշուի չհասնել տարերային տրամադրութիւնների հետ, բայց պարտաւոր է նաեւ դառնալ դրանց պատանդը: Իւրաքանչիւր քաղաքական ուժ իրականացնում է իր սեփական ծրագիրը»:

«Վճռական գործողութիւնների դրդողները թող բարի լինեն՝ իրենք իրականացնեն այդ գործողութիւնները: Թող ներուի ասել՝ ես առանձնապէս չեմ էլ հաւատում վճռականութեան կողմնակիցներին, որովհետեւ վճռական պահերին նրանք, սովորաբար, ասպարէզում չեն երեւում կամ ասպարէզից առաջին են ճողոպրում: Բացառելու չէ նաեւ նրանց հիմնականում ազնիւ շարքերում սաղորդների առկայութիւնը, որոնցից յատկապէս պէտք է զգուշանալ»:

Այս քանից յետոյ ինձ մնում է միայն ստորագրել:
ԱՐԱՄ ԱԲՐԱՀԱՄԵԱՆ
«ԱՌԱՒՕՏ»

ՎԱՍԱՐԱԿՈՒԹԻՒՆԸ ՉՍԵՌԱԻ, ԿԵՑՅԷ ՎԱՍԱՐԱԿՈՒԹԻՒՆԸ

Մարտի 1-ին ընդդիմութեան հրահրած հանրահաւաքի թերեւս ամենից կարեւոր նշանակութիւնը լինելու էր այն, որ այդ հանրահաւաքը ցոյց էր տալու երկրում հասարակական գործօնի կենսունակութեան աստիճանը: Մարտի 1-ի հանրահաւաքը ցոյց էր տալու երկրում տեղի ունեցածի, տեղի ունեցողի եւ սպասումների հանդէպ քաղաքացիների արեւելատուութեան աստիճանը: Հանրահաւաքի բազմամարդութիւնը, այն էլ չորս ամիս հանրահաւաքային դադարի եւ հիասթափութեան մասին կանխատեսումների պարագայում, իսկ դրանից յետոյ տեղի ունեցած հօր երթը ցոյց տուցին, որ այդ աստիճանը բաւական բարձր է: Դա հիմք է տալիս ենթադրելու, որ ներքին գործընթացում հասարակութեան դերակատարութիւնը շարունակում է մնալ զգալի մակարդակի վրայ, ինչը չի կարող հաշուի չառնել իշխանութիւնը: Հանրահաւաքի յաջող կարեւոր ցուցիչն այն էր, որ հասարակութիւնը փաստացի ընկալում է ոչ տարերային, ինստիտուցիոնալ, համակարգուած պայքարի այն Մարտավարութիւնը, որ ընդունել է ընդդիմութիւնը, այսինքն Հայ Ազգային կոնգրեսը: Հակառակ պարագայում Մարտի 1-ի հանրահաւաքը չէր լինի այդպէս բազմամարդ, այն էլ այն պարագայում, որ իշխանութիւնն ուղղակի կաթուածահար էր արել մարզերից երեւան եկող ճանապարհները, իսկ դրանից բացի էլ չէր արտօնել հանրահաւաքը, յուսալով, որ դա կանխարգելիչ դեր կը կատարի այդ հանրահաւաքին մասնակցելու որոշում կայացնող քաղաքացիների զգալի մասի համար, քանի որ զուշաւոր քաղաքացիների թիւը փոքր չէ: Բայց ինչպէս ցոյց տուեց հանրահաւաքը, փոքր չէ նաեւ համարձակների թիւը:

Գուցէ ընդդիմութեան պայքարի Մարտավարութիւնը, որ հիմնուած է համակարգը համակարգով, ոչ թէ տարերայնօրէն քանդելու սկզբունքի վրայ, շատերի համար կը թուայ սխալ: Բայց քաղաքական հաշուարկի ճիշդ կամ սխալ լինելը երեւում է միայն արդիւնքից: Իսկ եթէ հաշուի առնենք, որ քաղաքականութիւնը դա փաստացի անվերջ մի գործընթաց է, ապա կարելի է ասել, որ քաղաքականութեան մէջ արդիւնքը յարաբերական հասկացութիւն է եւ կարեւորն է խօսքը, կարեւորն է այդ խօսքը հանրութեան համար համոզիչ դարձնելը, սեփական քայլերի էութիւնը հասարակութեանը ճիշդ եւ մատչելի

լը՝ գարնանամուտին, որքան օրերի մթնելն ու լուսանալը: Մինչդեռ Համաժողովրդական շարժման ուսուրանքը երբեք չեն կարող սպառուել, ինչպէս օդը, որ շնչում ենք, գետը, որ հոսում է անյիշելի ժամանակներից, լեռը, որ չաւերժ է:

Միակ բանը, որի համար իսկապէս արժէ ափսոսալ, ժամանակի կորուստն է: Բայց ոչ մի սերունդ չի խուսափել դրանից:

բացատրելը: Այդ դէպքում գործընթացի թելադրողն ես: Դա է քաղաքականութեան արդիւնքը, հակառակ պարագայում գործընթացն է թելադրում քեզ, ինչը անարդիւնակտուութեան վկայութիւնն է: Մարտի 1-ի հանրահաւաքը որոշակի նախանշաններ էր պարունակում, որ այդուհանդերձ, չնայած քառամսեայ դադարին, որ յայտարարել էր ընդդիմութիւնը, չնայած ընդդիմութեան գործողութիւնների վերաբերեալ հասարակութեան տարբեր շերտերի տարակոյններին, հարցերին եւ ոչ այնքան գոհացուցիչ պատասխաններին, այդուհանդերձ ընդդիմութիւն-հասարակութիւն կապը շարունակում է լինել գոնէ նուազագոյն անհրաժեշտ մակարդակին, որ պէտք է իշխանութեան թիկունքին շնչելու եւ այդ շնչով իշխանութեանը եթէ նոյնիսկ չփոխելու, ապա առնուազն զգաստացնելու համար: Ամենակարեւորը, դա պէտք է ներքին գործընթացում հասարակութեան թելադրող դերը պահելու համար, անկախ այն բանից՝ գործ ունենք ուղղակի, թէ անուղղակի թելադրութեան հետ: Այդ տեսանկիւնից, Մարտի 1-ի հանրահաւաքին թէ ընդդիմութիւնը, թէ քաղաքացիները, նուազագոյն ինդիքը կատարեցին եւ գուցէ նաեւ գերակատարեցին, ցոյց տալով, որ իրենք կան, շարունակում են լինել, փաստացի շարունակում են հասկանալ իրար: Իսկ հասկանում է արդեօք այդ ամէնն իշխանութիւնը, ցոյց կը տայ թերեւս մօտ ապագան:

ՅԱԿՈՒ ԲԱԴԱԼԵԱՆ
«ԼՐԱԳԻՐ»

ԲՈՆԱՊԵՏՈՒԹԵԱՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ ՄԻ ԳԵՂԵՑԻԿ ՕՐ ՄՊԱՌՈՒԵԼՈՒ ԵՆ

Հայ Ազգային կոնգրեսի՝ աւելի քան չորս ամիս զանգուածային միջոցառումներ չհրահրելու մարտավարութիւնը շատերին թիւրիմացութեան մէջ էր զցել, թէ Համաժողովրդական Շարժման թափը կտրուել է, Շարժումը նահանջում է՝ անխուսափելի մարման հեռանկարով: Մինչդեռ Մարտի 1-ը անակնկալ մատուցեց այդպէս մտածողներին: Մատենադարանի մերձակայ տարածքում հաւաքուած պատկառազուր բազմութիւնը եկել էր ապացուցելու, որ ոչ ուժ ի վիճակի չէ հնազանդեցնել իրեն, բռնանալ իր կամքին, կասեցնել իր պայքարը: Դա փայլուն ցոյց էր, որ մեր հասարակութիւնն ընդհանուր ապագայ չունի մէկ տարի առաջ իր հետ թշնամացած, վստահութեան ու փոխըմբռնման բոլոր կամուրջներն այրած, բռնութեամբ ու արիւնահեղութեամբ իշխանութիւնը զաւթածների հետ: Եթէ վերջիններս բաւարար խոհեմութիւն չունենան հաշուի առնելու այս իրողութիւնը, ուրեմն հայ ժողովուրդը գործ ունի այսօր արդէն անմեղսունակ ձեւացող բախտահիրների հետ: Տարրական տրամաբանութիւնը անգամ վերջին բթամիտին է յուշում, որ անարդարութիւնների եւ կեղծիքի ճահիճի մէջ ընկղմուած երկիրը հնարաւոր չէ պաշտպանել զրահաբաճկոններով ու գէնքով, որ սոցիալական աղէտի առջեւ յայտնուած ժողովրդին հնարաւոր չէ կերակրել

նստիկանական դուբինկաներով կամ ի ցոյց ամէնքի՝ Մաշտոց-Մայրթ-Նովա պողոտաների խաչմերուկում սպառնալից կանգնած ջրցան մեքենայի սարսափազդու տեսքով:

Մարտի 1-ը՝ հանրահաւաքն ու երեւանում երբեւէ տեղի ունեցած ամենամարդաշատ երթերից մէկը, շատ լուրջ ազդանշան էին բռնապետութեան պարագլուխներին, որ սկսում է Համաժողովրդական պայքարի հերթական փուլը: Զուսպ, համբերատար, անհասանել, հսկայական ներուժ պարունակող պայքար, որի դէմն անհնար է լինելու առնել «աւանդական» մեթոտներով՝ սպառնալիքներով, ահաբեկումներով, բռնութիւններով, դատատաններով, քարոզչական մաշտած հնարքներով՝ մարդկանց մոլորեցնելով ու կեղծիքներով: Ինչ էլ լինի, բռնապետութեան ռեսուրսները մի գեղեցիկ օր սպառուելու են: Դա անխուսափելի է նոյնքան, որքան առաջին ձիւնը՝ ձմեռնամուտին, որքան ձնհա-

ԼԻԲԱՆԱՆԱՅԱՅԵՐՈՒ ՈՒՇԱԴՐՈՒԹԵԱՆ
Յառաջիկայ Յունիս 7-ին տեղի պիտի ունենան Լիբանանի խորհրդարանական ընտրութիւնները: Այն լիբանանահայերը, որոնք կ'ուզեն մասնակցիլ այդ ընտրութիւններուն, կրնան հեռաձայնել՝ 310-466-7779 թիւին եւ ստանալ յաւելեալ մանրամասնութիւններ:

Մասնիկ
ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ
ՊԱՇՏՕՆԱԹԵՐԹ՝
ՍՈՑԻԱԼ ԴԵՄՈԿՐԱՏ ԶՆՁԱԿԵԱՆ
ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ
Արեւմտեան Ամերիկայի Շրջանի
ԽՄԲԱԳԻՐ՝
ՏՕԹԹ. ԱՐՇԱԿ ԳԱԶԱՆՃԵԱՆ
ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԿԱԶՄ՝
ԳԱՐԻԷԼ ՍՈՒՆՅԵԱՆ
ՍԱՅԱԿ ՈՒՌԹՅԵԱՆ
ՏՕԹԹ. ՅԱՐՈՒԹԻՒՆ ՍԱՂԵԱՆ
ՎԱԶԳԷՆ ԽՈՍԱՆԵԱՆ
ՅԱՐՈՒԹ ՏԵՐ ՂԱԻԹԵԱՆ

ՎԱՐՉԱԿԱՆ ԲԱԺԻՆ
ԼԵՆԱ ՍԱՆՈՒԿԵԱՆ
Ղեռ. (626) 797-7680
Ֆաքս. (626) 797-6863
E-Mail: massis2@earthlink.net
http://www.massisweekly.com

MASSIS Weekly
Organ of the Armenian Social
Democratic Hunchakian Party
of Western USA
1060 N. Allen Ave.
Pasadena, CA 91104
Phone: (626) 797-7680
Fax: (626) 797-6863
(USPS 667-310) (ISSN 0744-334X)
Published Weekly
Except Two Weeks in August
ANNUAL SUBSCRIPTION RATES:
USA \$50.00, Canada \$60 (Second
Class), \$75.00 (Air Mail),
Overseas \$85.00 (2nd Class Mail),
\$125.00 (Air Mail).
All payments must be made in
US funds & Drawn on US banks.
Periodicals Postage Paid
at Pasadena CA.
Please Send Address Change To
MASSIS WEEKLY
1060 N. Allen Ave.
Pasadena, CA 91104

ՐԱՅԱՍԱՆ

«7-ի գործի» քննութիւնը ՏԵՂԱՓՈԽՈՒԵՑ ԿԵՆՏՐՈՆ ԵՒ ՆՈՐՔ-ՄԱՐԱՇ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ԱՌԱՋԻՆ ԱՏԵԱՆԻ ԴԱՏԱՐԱՆ

«ԱԶԱՏՈՒԹԻՒՆ ՌԱՏԻՈՅ»:
Փետրուար 27-ին Երեւանի քրէական դատարանում «7-ի գործով» դատավարութեան վերջին նիստն էր, քանի որ ըստ Գրէական դատավարութեան օրէնագրքի փոփոխութիւնների, քրէական դատարանը Մարտի 1-ից լուծարուած է, իսկ «7-ի գործը» տեղափոխուած է Կենտրոն եւ Նորք-Մարաշ համայնքների առաջին ատեանի դատարան:



Նախկին արտաքին գործոց նախարար, այժմ Բաղրամյան քանոնարկեալ Ալեքսանդր Արզումանեան

Դատաւոր Մնացական Մարտիրոսեանը դատավարութեան գործընթացի վերաբերեալ նիստի սկզբում ամբաստանեալների հնչեցրած քննադատական մի քանի յայտարարութիւններից յետոյ ընդամիջում յայտարարեց, որից յետոյ հրապարակեց հետեւեալ որոշումը. - «Նկատի ունենալով այն հանգամանքը, որ Հայաստանի Հանրապետութեան նախագահի համանագրով եւ՝ դատաւոր Մնացական Մարտիրոսեանս, նշանակուել եմ Երեւանի Կենտրոն եւ Նորք-Մարաշ համայնքների առաջին ատեանի դատարանի դատաւոր, սոցն քրէական գործով դատական քննութեանը դատաւորի մասնակցութիւնը անհնարին է: Հետեւաբար գործի քննութիւնը պէտք է շարունակել դատարանի նոցն կազմով: Վերոգրեալի հիման վրայ էլ որոշեցի սոցն քրէական գործը 2009 թուականի Մարտի 1-ից փոխանցել Երեւանի Կենտրոն եւ Նորք-Մարաշ համայնքների առաջին ատեանի դատարան»:

Պատճառաբանելով, որ Մնացական Մարտիրոսեանը արդէն քրէական դատարանում չի աշխատում, յայտարարուած հերթական ընդմիջումից յետոյ ամբաստանեալները «Ուղի», դատարանն է գալիս» կոչից յետոյ նստած մնացին: Դատաւորը դա անյարգալից վերաբերմունք համարեց: Այնուհետեւ պարզաբանեց, որ իրեն առաջին ատեանի դատարանի դատաւոր նշանակելու վերաբերեալ նախագահ Սերժ Սարգսեանի որոշումը ուժի մէջ է մտնում Մարտի 1-ից, այսինքն ինքն այս պահին հանդիսանում է քրէական դատարանի դատաւոր:

Ամբաստանեալներից Միանիկ Մայրապետեանը յայտարարութեամբ հանդէս եկաւ՝ ասելով. - «Դուք այստեղ հրապարակեցիք, որ դուք արդէն նշանակուած էք Նորք-Մարաշի առաջին ատեանի դատաւոր, բայց այստեղ դատարանում դատավարութիւն էք վարում: Սա անհասկանալի անհեթեթութիւն է»:

«Նկատի ունենալով, որ թիւրըմբռնման արդիւնք է ձեր անյարգալից վերաբերմունքը, ձեզ ընդամէնը նախազգուշացնում եմ», - ասաց դատաւոր Մարտիրոսեանը: «Մենք թիւրըմբռնում ունենք ընդհանրապէս Հայաստանի դատական համակարգի նկատմամբ», - յայտարարեց Ալեքսանդր Արզումանեանը:

ԳԱԳԻԿ ԲԵԳԱՐԵԱՆԸ ԿՐ ԳԼԽԱԴՈՐԻ ՀՀԿ-Ի ՑՈՒՑԱԿԸ ԵՐԵՒԱՆԻ ԸՆՏՐՈՒԹԻՒՆՆԵՐՈՒՄ

Հայաստանի հանրապետական կուսակցութեան (ՀՀԿ) խորհուրդը հաստատեց Մայիսի 31-ին կայանալիք Երեւանի աւագանու ընտրութիւններում կուսակցութեան համամասնական ցուցակը, որը, ՀՀԿ-ի եւ երկրի նախագահ Սերժ Սարգսեանի առաջարկութեամբ, կը գլխաւորի մայրաքաղաքի Կենտրոն համայնքի թաղապետ Գագիկ Բեգարեանը:

Որովհետեւ դրա մասին են վկայում ե՛ւ բոլոր սոցիոլոգիական հարցումները, ե՛ւ Հանրապետականի մեծ ներկայութիւնն ու նրա լուրջ վարկանիշը Երեւան քաղաքում»:

«Առաջադրուել է միակ թեկնածուն՝ պարոն Բեգարեանը, եւ միաձայն ընդունուել է», - նիստից յետոյ «Ազատութիւն» ռադիոկայանին ասաց ՀՀԿ-ի խօսնակ, Ազգային ժողովի պատգամաւոր Էդուարդ Շարմազանովը: - «Կուսակցութիւնը լուրջ յաւակնութիւններ ունի, որ ընտրութիւններից յետոյ էլ Հանրապետական կուսակցութեան ներկայացուցիչը կը լինի քաղաքապետ»:

Մայիսի 31-ին կայանալիք աւագանու ընտրութիւններում ընտրողների քուէների կէսից աւելին հաւաքած քաղաքական ուժի ցուցակի առաջին համարը կը դառնայ Երեւանի քաղաքապետ: Իսկ եթէ որեւէ կուսակցութիւն կամ դաշինք չստանայ ձայների կէսից աւելին, քաղաքապետին կ'ընտրի աւագանին:

ԼԵՈՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ԶԻՆՈՒԱԾ ՈՒԺԵՐԻ 3 ԶԻՆԾԱՌԱՅՈՂՆԵՐ ԱՆՅԱՅՏ ՀԱՆԳԱՍԱՆՔՆԵՐՈՒՄ ՀԱՏԵԼ ԵՆ ՍԱՀՄԱՆԸ

Լեւոնային Ղարաբաղի պաշտպանութեան նախարարութեան մամուլի ծառայութեան տարածած հաղորդագրութեան համաձայն, Փետրուարի 28-ի զինքըր Լեւոնային Ղարաբաղի Զինուած ուժերի ժամկէտային գինձառաջողները Հրանտ Արթուրի Մարկոսեանը, Ալիկ Ռաֆիկի Թեոսեանը եւ Արտուշ Վարդեանի Սարգսեանը «անյայտ հանգամանքներում հատել են դարաբաշտա-ադրբեջանական շփման գօտու՝ Ադդամի ուղղութեան սահմանահատուածը եւ յայտնուել ադրբեջանական զօրքերի վերահսկողութեան տակ գտնուող տարածքում»:

Իշխանական բոլոր 4 կուսակցութիւնները յայտարարեցին, որ քաղաքապետի ընտրութիւններին պատրաստուել են առանձին-առանձին մասնակցել, թէեւ այդ առնչութեամբ չկայ կոալիցիայի միասնական որոշում:

ՌԱԶՄԻԿ ԶՈՐԱԲԵԱՆ. «ԿԱՐԾՈՒՄ ԵՄ ԵՐԿԽՕՍՈՒԹԵԱՆ ԿԵՏԵՐԻՑ ՄԵԿՆ ԷԼ ԿԱՐՈՂ Է ԼԻՆԵԼ ՀԱՄԱՆԵՐՈՒՄԸ»

«ԱԶԱՏՈՒԹԻՒՆ ՌԱՏԻՈՅ»:
Մօտ ապագայում կարող է համաներում յայտարարուել ընդդիմութեան կայանաւորուած գործիչների նկատմամբ: «Ազատութիւն» ռադիոկայանի հետ զրոյցում այսպիսի կարծիք յայտնեց իշխող Հանրապետական կուսակցութեան փոխնախագահ Ռազմիկ Զորաբեանը:



Հանրապետական կուսակցութեան փոխնախագահ Ռազմիկ Զորաբեան

«Քանի որ ընդդիմութիւնը գնում է սահմանադրական ճանապարհով, ինչպէս միտինգում յայտարարուեց, դա արդէն վստահութիւն է ներշնչում: Ժամանակից շուտ ազատ արձակուածները իրենց հանգիստ կը դրսեւորեն եւ հասարակութեան մէջ աւելորդ բեւեռացումներ չեն ստեղծի», - ասաց Զորաբեանը: - «Կարծում եմ երկխօսութեան կէտերից մէկն էլ կարող է լինել համաներումը», - եզրակացրեց Հանրապետական կուսակցութեան փոխնախագահը:

Թշնամի է քեզ, դու երբեք չես փոխանցի: Ամէն կերպ փորձելու ես, խախտելով բոլոր նորմերը, որպէսզի չչանձնէս իշխանութիւն», - նաեւ ասաց Զորաբեանը:

«Որեւէ իշխանութիւն, եթէ իր դէմ պայքարող ընդդիմութիւնը գնում է յեղափոխական ճանապարհով, նա երբեք իշխանութիւն չի գիշի: Երբ փորձում ես փոխանցել իշխանութիւն ու գալիս է հակառակորդ, նոյնիսկ կարելի է ասել՝»

«Մենք անցեալ տարուայ Մարտի 1-ին ամէն գնով կարգ ու կանոն հաստատեցինք, եթէ չհաստատէինք, հնարաւոր է շատ վատ վերջանար, քաղաքացիական կռիւներ սկսուէին: Կանխեցինք մենք, թէեւ արդիւնքում եղան գոհեր, վիրաւորներ... բայց սա մինիմում գոհերն էր, որ կարող էին լինել», - մեկնաբանեց նա:

ԳԱԼՈՒՍՏ ՍԱՀԱԿԵԱՆԸ ԱՄՆ-Ի ՊԵՏԴԵՊԱՐՏԱՄԵՆՏԻ 2008 ԹՈՒԱԿԱՆԻ ԶԵԿՈՅԸ »ՅԵՐԻԻՐԱՆՔ« Է ՈՐԱԿՈՒՄ

«ԱԶԱՏՈՒԹԻՒՆ ՌԱՏԻՈՅ»:
Ազգային ժողովի Հանրապետական խմբակցութեան ղեկավար Գալուստ Սահակեանի համոզմամբ Հայաստանում մարդու իրաւունքների իրավիճակի վերաբերեալ ԱՄՆ-ի Պետդեպարտամենտի 2008 թուականի գեկոյցը իրականութեան հետ որեւէ կապ չունի:

ների ժամանակ), որպէսզի այսօր այսպիսի յերիւրանքներ տարածեն Հայաստանի վրայ», - «Ազատութիւն» ռադիոկայանի հետ զրոյցում յայտարարեց Հանրապետական խմբակցութեան ղեկավարը:

Գալուստ Սահակեանի կարծիքով Միացեալ Նահանգները այդ գեկոյցով փորձում է ճնշում գործադրել Հայաստանի վրայ եւ մեծացնել իր ազդեցութիւնը տարածաշրջանում: «Պարզապէս մեր ընդդիմադիրներին օգտագործեցին, որ անպայման տասնեակ գոհեր լինէր, կամ տասը գոհ լինէր (2008-ի յետընտրական իրադարձութիւն»:

Անցած շաբաթ հրապարակուած ԱՄՆ-ի Պետդեպարտամենտի գեկոյցում նշուել է, որ 2008 թուականի ընթացքում «Հայաստանում մարդու իրաւունքների վիճակը հապտ վատթարացել է, իշխանութիւնները եւ նրանց ներկայացուցիչները մարդու իրաւունքների բազմաթիւ ոտնահարումներ են թոյլ տուել, յատկապէս՝ կապուած նախագահական ընտրութիւնների եւ դրանց յաջորդած ցոյցերի ճնշման հետ»:

ՍԱՅՐԵՆԻՆ ԱՅՍՕՐ ՈՉ ՄԻԱՅՆ ՓՈՂՈՑՈՒՄ Է ՈՏՆԱՀԱՐԻՈՒՄ, ԱՅԼԵՒ ԵԹԵՐՈՒՄ

«ՓԱՆՈՐԱՄԱ»:
«Դժբախտաբար մեր լեզուն այսօր շատ է ոտնահարուած: Այն ոտնահարուած է ոչ միայն փողոցային խօսակցութեան մէջ, այլեւ եթերում», - իր մտահոգութիւնը յայտնեց բանասիրական գիտութիւնների դոկտոր, գրականագէտ Դաւիթ Գասպարեանը:

որ այսօր հայերէն չեն մտածում: Եթէ առաջ ուղտերէն էին մտածում, ապա հիմա էլ սկսել են անգլերէն մտածել:

Նրա խօսքով, այսօր շատ անհրաժեշտ է, որ եթերում եւ մամուլում լեզուի վերահսկողութիւնը ուժեղանայ: «Եթերում լեզուն պէտք է վերահսկուի Լեզուի պետական տեսչութեան չափորոշիչներին համապատասխան: Այսօր երեխաներն ինչ լսում են եթերից, դա ընկալում են որպէս ճիշդ», - յաւելեց նա: Գրականագէտի կարծիքով, հեռուստաընկերութիւնները պէտք է մայրենի լեզուին նուիրուած հաղորդումներ ունենան: Դաւիթ Գասպարեանը նշեց, որ այսօր օգտագործում են հայերէնին ոչ բնորոշ շեշտադրութիւնը, սխալ են տողադաճ անում:

Գրականագէտը մայրենի լեզուի պահպանման համար առաջարկում է լուծումներ. անհրաժեշտ է բարձրացնել Լեզուի Պետական տեսչութեան դերը: Պէտք է իրականացնել վերահսկողութիւն բոլոր բնագաւառներում՝ սկսած գովազդային վահանակներից մինչեւ տպագրող գրքերը: Դպրոցներում եւ բուհերում անհրաժեշտ է լեզուի ուսուցման որակը բարձրացնել եւ մեծ տեղ տալ գրականութիւն աւարկային:

Դաւիթ Գասպարեանը նշեց,

Ըստ նրա, կարելի է դասաւորումներ իրականացնել եւ հեռացնել ոչ հայերէն խօսող դասախօսներին եւ ուսուցիչներին: Գրականագէտի կարծիքով, մայրենի լեզուի պահպանման հարցում պետութիւնը պէտք է վարի որոշակի քաղաքականութիւն, որովհետեւ լեզուն ազգային ամենամեծ հարստութիւնն է ազգի համար:

ԼՈՒՐԵՐ

ԱԼԻ ԲԱԲԱԶԱՆԸ ՅՐԱԴԻՐՈՒԱԾ Է ՍԾՏՅ-Ի ԱՐՏԳՈՐԾՆԱԽԱՐԱՐՆԵՐԻ ԵՐԵՒԱՆԵԱՆ ՆԻՍՏԻՆ

«ԱԶԱՏՈՒԹԻՒՆ ՌԱՏԻՈՅ»:
 Հայաստանի արտգործնախարարութիւնից հաստատեցին թուրքական լրատուամիջոցների հարողագրութիւնը, որ նախարար էդուարդ Նալբանդեանը հրաւեր է ուղղել թուրքիայի արտգործնախարար Ալի Բաբաջանին՝ մասնակցելու Ապրիլի 16-17-ը Երեւանում կայանալիք Սեւծովեան տնտեսական համագործակցութեան (ՍՏՏՀ) կազմակերպութեան անդամ երկրների արտգործնախարարների նիստին:
 «Հայաստանը նախագահում է Սեւծովեան տնտեսական համագործակցութեան կազմակերպութիւնում, այդ նախագահութեան շրջանակներում Երեւանում տեղի է ունենալու Սեւծովեան տնտեսական համագործակցութեան անդամ երկրների արտգործնախարարների հանդիպում, եւ պարոն Բաբաջանը եւս՝ որպէս թուրքիայի արտգործնախարար, որը կազմակերպութեան անդամ է, հրաւիրուած է



Թուրքիայի արտգործնախարար Ալի Բաբաջան

այդ հանդիպմանը մասնակցելու», - «Ազատութիւն» ռադիոկայանին ասաց արտգործնախարարութեան խօսնակի պաշտօնակատար Տիգրան Բալբեանը:
 Թուրքական եւ ադրբեջանական լրատուամիջոցները այսօր հարողդել են, որ Ալի Բաբաջանը ընդունել է մօտ մէկ ամիս առաջ իրեն յղուած հրաւերը եւ այցելելու է Երեւան:

ԲԱԶՄԱՐԱԶԱՐԱՆՈՑ ԶԱՆՐԱՅԱԲ ԵՒ ԵՐԹ

Շարունակուած էջ 1-էն
 շուրջօրեայ հանրահաւաքներ, չդադարող երթեր ու պիկետներ, գրոհ նախագահական նստավայրի ուղղութեամբ, մի խօսքով՝ անյապաղ իշխանափոխութիւն, ապստամբու-

շարքերուն կը քալէին Լեւոն Տէր-Պետրոսեանը, Հայաստանի Ժողովրդական կուսակցութեան առաջնորդ Ստեփան Դեմիրճեանը եւ «Հանրապետութիւն» կուսակցութեան ղեկավար Արամ Սարգսեանը: Երթի ընթացքին կը հնչէին ազգային



Երթի մասնակիցները Երեւանի փողոցներում վրայ

թիւն կամ յեղափոխութիւն: Միանգամից հարկ եմ համարում յայտարարել. Համաժողովրդական շարժման կամ Հայ Ազգային կոնգրեսի բառապաշարում իսպառ բացակայել եւ այսուհետեւ եւս բացակայելու են գրոհ, ապստամբութիւն, յեղափոխութիւն հասկացութիւնները: Եթէ այս հասկացութիւններն են կազմում քաղաքական ուժերի վճռականութեան մասին պատկերացման հիմքը, ապա մենք կտրականապէս մերժում ենք այդպիսի վճռականութիւնը», - իր խօսքի ընթացքին ըսաւ Տէր-Պետրոսեան: (Ելոյթէն հատուածներ տեսնել էջ 5):
 Հանրահաւաքին յաջորդեց երթ՝ Մաշտոցի պողոտայ - Գրիգոր Լուսաւորիչ պողոտայ - Միասնիկեանի արձան - Իտալիայի փողոց - Հանրապետութեան հրապարակ - Նալբանդեան փողոց - Թումանեան փողոց - Հիւսիսային պողոտայ երթուղով:
 Հազարաւոր մարդիկ մասնակցեցան երթին, որու առաջին

երգեր ու «Ազատ, անկախ Հայաստան», «Պայքար, պայքար, մինչեւ վերջ», «Միացում» եւ այլ վանկարկումներ:
 Ոստիկանները կ'ողակցէին «արգիլուած» երթին: Միջադէպեր չեղան. միայն երթի սկզբին, երբ առաջին շարքերը հասած էին Մաշտոց - Սայաթ-Նովա խաչմերուկին, իսկ ետեւի շարքերը դեռ չէին շարժած Մատենադարանի մօտէն, փոքր միջադէպ տեղի ունեցաւ ցուցարարներու եւ ոստիկաններու միջեւ:
 Ընդդիմութեան ղեկավարները ծաղիկեպակներ դրին Ալեքսանդր Միասնիկեանի արձանի մօտ եւ մէկ րոպէ լուծեամբ յարգեցին Մարտի 1-ի գոհերու յիշատակը:
 Այնուհետեւ երթի մասնակիցները ուղղուեցան դէպի Հիւսիսային պողոտայ:
 Մինչ հանրահաւաքը ոստիկանները կը փորձէին խոչընդոտել մարդկանց հոսքը դէպի Մատենադարանի հարթակ, սակայն դիմադրութեան հանդիպելով ի վերջոյ տեղի տուին:

ԲԵՌՆԱՐ ՖԱՍԻԷ. «ՄԵՆՔ ԲԱՔՈՒ ԵՆՔ ՄԵԿՆՈՒՄ ԴՐԱԿԱՆ ԼԻՑՔԵՐՈՎ»

«ԱԶԱՏՈՒԹԻՒՆ ՌԱՏԻՈՅ»:
 ԵԱՀԿ-ի Մինսկի խմբի համանախագահ Բեռնար Ֆասիէն Մարտ 3-ին ասաց, որ համանախագահները պատրաստուած են Երեւանից անմիջապէս մեկնել Բաքու՝ Հայաստանի եւ Ատրպէյճանի նախագահների առաջիկայ հանդիպման ժամկետները համաձայնեցնելու նպատակով:
 «Յիւրի իսլուժ Հայաստանի եւ Ատրպէյճանի նախագահների՝ իրենց իսկ կողմից դրական որակուած հանդիպումից յետոյ տարածաշրջան կատարած մեր այս այցի ընթացքում մեր ունեցած բոլոր հանդիպումները եղել են բաւականին յաջեցած եւ առարկայական: Բանակցային գործընթացը շարունակուած է», - Երեւանում լրագրողներին ասաց ԵԱՀԿ-ի Մինսկի խմբի ֆրանսիացի համանախագահը:
 Յիշեցնենք, որ համանախագահների այցը տարածաշրջան սկսուել էր Փետրուարի 26-ին՝ Պաքու կատարած այցով:
 Պատասխանելով «Ազատութիւն» ռադիոկայանին հարցին, թէ համանախագահները Հայաստանի եւ Ատրպէյճանի նախագահների առաջիկայ հանդիպման ինչ կոնկրետ ժամկետներ են առաջարկում, Բեռնար Ֆասիէն արձագանքեց. - «Թոյլ տուէք մեզ առաջինը



ԵԱՀԿ-ի Մինսկի խմբի համանախագահները Երեւանի մէջ կայացած ասուլիսի մը ընթացքին

նախագահներին ներկայացնել մեր կողմից առաջարկուող ժամկետները, որպէսզի նրանք կարողանան ընտրել»:
 Այդուհանդերձ, ֆրանսացի դիւանագէտը յոյս յայտնեց, որ երկու երկրների նախագահների նոր հանդիպումը կը կայանայ առաջիկայ ամիսների ընթացքում:
 «Սա նշանակում է, որ մենք Պաքու ենք մեկնում դրական լիցքերով», - շեշտեց Բեռնար Ֆասիէն:
 Սերժ Սարգսեանի եւ Իլհամ Ալիեւի հերթական հանդիպումը կարող է կայանալ մայիսի 7-ին: Այդ օրը Եւրամիութիւնում ներկայումս նախագահող Չեխիայի մայրաքաղաք Պրահայում նախատեսուած է անցկացնել Եւրամիութեան «Արեւելեան գործընկերութեան» ծրագրին մասնակցող 6 երկրների, այդ թւում՝ Հայաստանի եւ Ադրբեջանի մասնակցութեամբ գագաթնաժողով:

Ոստիկանները նաեւ փակած էին դէպի Երեւան երթեւեկութիւնը: Առաւօտեան ժամերէն սկսեալ արգելուած կամ սահմանափակուած էր մարզերէն դէպի Երեւան ճանապարհորդութիւնը:
 Ինչ կը վերաբերի միջազգային մարմիններու կողմէ հնչած զնահատականներուն, Մարդկային իրաւանց Հսկիչ միջազգային հեղինակաւոր կազմակերպութիւնը եկաւ յայտարարելու թէ, Երեւանի Մարտիմէկեան իրադարձութիւններու ամբողջական պատկերը դեռ պէտք է ի յայտ գայ:
 «Իրաւապաշտպան մարմիններու գործողութիւնները տարբեր վայրերու մէջ եւ օրուայ տարբեր ժամերուն հանգեցուցին մահուան դէպքերու եւ վնասուածքներու:
 «Բազմաթիւ հարողումներէն պարզ կը դառնայ, որ տարբեր պահերու ոստիկանութիւնը կիրառած է ոչ համարժէք ուժ՝ ծեծի ենթարկելով ակրեսիւ պահուածք չունեցող ցուցարարներու, եւ ոստիկանութեան կողմէ հրագէնի օգտագործման որոշ դէպքեր կը թուի թէ՛ եղած են անհամաչափ եւ առանց թիրախի մէջ տարբերութիւն դնելու»:
 «Այն փաստը, որ ոստիկանութիւնը ժամանակ առ ժամանակ նոյնպէս ենթարկուած է յարձակման, շարդարացներ անոնց կողմէ ոչ համարժէք ուժի կիրառումը: Ինչպէս նաեւ շարդարացներ կաշառակրներու նկատմամբ վատ վերաբերմունքը եւ զանոնք խոշտան-

գումներու ենթարկելը, եւ դատական պատշաճ իրաւական գործընթացի մերժումը, ինչպէս օրինակ իրաւաբան ընտրելու իրաւունքը», - ըսուած է տեղեկագիրին մէջ:
 ԱՄՆ-ի Պետական Գրասենեակը անցեալ շաբաթ հրապարակուած իր տարեկան տեղեկագիրին մէջ, ինք եւս անդրադարձաւ Հայաստանի իրադարձութիւններուն:
 «Փետրուար 19-ի նախագահական ընտրութիւնները երկրէն ներս, անցած են էական թերութիւններով. ինչպէս շարքին էին կառավարութեան թեկնածուի նկատմամբ շահեկան վերաբերմունքը, քուէատուփերու լցունումներու դէպքերը, ընտրակաշառքը, բազմակի քուէարկութիւնը, ընտրողներու անարեւելումը, ընտրական յանձնաժողովներու անդամներու եւ կուսակցութիւններու վստահուած անձանց դէմ բռնութիւնները, ընտրական նպատակներով հանրային միջոցներու շարաշահումը», - ըսուած է տեղեկագիրին մէջ:
 «Մարտի 1-2-ին իշխանութիւնները ուժ կիրառեցին՝ ցրուելու համար ընտրութիւններու ընթացքը եւ արդիւնքները վիճարկող ցուցարարներու եւ անվտանգութեան ուժերու միջեւ բախումներու արդիւնքով 10 մարդ զոհուեցաւ: Բռնութիւններէն յետոյ իշխանութիւնները 20-օրեայ արտակարգ դրութիւն յայտարարեցին», - կ'արձանագրէ Ամերիկայի Պետական Գրասենեակի տարեկան զեկոյցը:

ՄԱՍԻՍ
 ԱՄԵՆԱՎՍԱԿԵԼԻ ԱՂԲԻՒՐԸ ՀԱՅՐԵՆԻ ԼՈՒՐԵՐՈՒ

ՇԱԲԱԹ

ՀԱՏՈՒԱԾՆԵՐ ԼԵՒՈՆ ՏԵՐ-ՊԵՏՐՈՍԵԱՆԻ ԵԼՈՅԹԵՆ՝ ՄԱՐՏ 1-Ի ՀԱՆՐԱՅԱԽԱՔԻ ԸՆԹԱՑՔԻՆ

«Կոնգրեսն ըմբռնումով է մտանում հասարակութեան որոշ տարրերի տրամադրություններին, բայց դա չի նշանակում, որ պատրաստ է անվերապահորեն ենթարկուել դրանց: Կոնգրեսի դաշնանաձև գլխավոր սկզբունքը պետության շահն է եւ ժողովրդի անվտանգությունը ու բարօրությունը: Ուստի եթէ նա երբեմն չի կատարում որոշ մարդկանց պահանջած կամ ակնկալած գործողությունները, դա նշանակում է, որ կա՛մ սխալ ու վնասակար, կա՛մ էլ՝ ժամանակավրէպ է համարում դրանք»:

«Խօսքը վերաբերում է մասնավորապէս, շուրջօրեայ հանրահաւաքների եւ անդադար երթերի ու պիկետների (ցուցարան շարքերու) անցկացման պահանջին: Կոնգրեսի ղեկավարութիւնն ամենեւին չի մերժում պայքարի այդ մեթոտների կիրառումը, դա դիտելով որպէս քաղաքացիների անօտարելի սահմանադրական իրաւունքը, սակայն գտնում է նաեւ, որ այսօր դեռեւս դրա ժամանակը չէ»:

«Հայաստանն այսօր կանգնած է ժողովրդավարութեան վերականգնման, Ղարաբաղեան կարգաւորման, տարածաշրջանային մեկուսացման յաղթահարման եւ տնտեսական ճգնաժամի դիմագրաւման Մարտահրաւէրների առջեւ, իսկ առջեւում մեզ սպասում են աւելի դժուարին ժամանակներ՝ յղի սոցիալական եւ անգամ հումանիտար աղէտի առաջացման վտանգներով»:

«Հետեւաբար, ներկայ հանգրուանում Կոնգրեսի պահանջում է գործել առաւել զգուշութեամբ ու պատասխանատուութեամբ՝ չբարդացնելու համար առանց այդ էլ բարդ իրավիճակը: Մեզ չի հետաքրքրում՝ իշխանութիւնները ճիշդ թէ սխալ կը հասկանան մեր քայլերն ու գործողութիւնները: Կարեւորը մեզ համար այդ քայլերի ու գործողութիւնների ճշգրտութիւնն է»:

«Իշխանութիւնները ոչ մի դաս չեն քաղել Մարտի 1 ի ողբերգութիւնից եւ ոչ մի քայլ չեն կատարել ժողովրդավարութեան եւ օրինականութեան հաստատման, ինչպէս նաեւ ներքաղաքական միջոցառումի առողջացման ուղղութեամբ»:

«Ցաւով պէտք է արձանագրել, որ Մարտի 1 ի ողբերգութեան տարելիցը մենք ստիպուած ենք նշել ընկճող միջոցառումով: Բանտերը շարունակում են լցուած մնալ շինծու մեղադրանքների հիման վրայ քրէական հետապնդման ենթարկուած մեր տասնեակ ընկերներով: Ամբողջ մի տարի իշխանութիւնները ոչինչ չեն արել ոճրագործութեան բուն պատասխանատուների՝ մարդասպանների, հրձիգների, խանութներ թաւանողների բացառապէս ուղղութեամբ, ընդհակառակը, ջանք չեն ինայնչ նրանց յանցագործութիւնները կոծկելու համար: Քաղաքապետարանը 94 անգամ ապօրինաբար մերժել է հանրահաւաքներ ու երթեր անցկացնելու մեր դիմումները: Հեռուստատեսութիւնն, իր բոլոր պիկետներով, վերածուել է պետութեան բացարձակ վերահսկողութեան տակ գտնուող ստորաբարձ քարոզչամեքենայի»:

«Այսինքն, Հայաստանի իշ-



խանութիւնների կողմից առերեւոյթ ժողովրդավարութեան եւ օրինականութեան հաստատման ուղղուած կիսատ պռատ քայլերն ու օրինադրական նախաձեռնութիւններն իրականում սոսկ քարոզչական աճապարարութիւններ են կամ սովորական խաբկանք, արեւելեան խորամանկութիւնն եւ ժամանակ շահելու միջոց՝ որքան էլ նրանց փաստաբանների դերն ստանձնած միջոց գային բիւրոկրատները փորձեն դրանցում ինչ-որ դրական զարգացումներ փնտռել»:

«Միակ լուսաւոր կէտն այս մղձաւանջում եւ Հայաստանի արատաւորութեամբ պատիւը փրկող միակ հունգամանքը ժողովրդի անկոտորում կամ քն է եւ հզօր ընդդիմութեան ձեւաւորումը՝ ի դէմս Համաժողովրդական շարժման կամ Հայ ազգային կոնգրեսի: Չնայած Մարտի 1 ի դաժան սպանդին ու դրան յաջորդած տոտալ եւ ամենօրեայ հալածանքներին, ակնյայտ է, որ իշխանութիւններին չյաջողուեց ահաբեկել կամ ծնկի բերել ժողովրդին եւ նրան ստիպել ետ կանգնել իր քաղաքացիական իրաւունքների վերականգնման համար մղուող պայքարից»:

Անդրադառնալով համաշխարհային ֆինանսական ճգնաժամին՝ Լեւոն Տէր-Պետրոսեանը յայտարարեց. - «Հայաստանի իշխանութիւնները, որդեգրելով ջայլամի քաղաքականութիւն, առաժմ հանրութեան առջեւ չեն բացառապէս առկա տնտեսական ճգնաժամի էությունն ու ընդգրկումը, ակնբեւեւաբար, ժողովրդին հանգստացնելու եւ նրա մօտ խուճապ չառաջացնելու նպատակով: Սկզբում դա արւում էր նոր առումակայանի, Չանգեզուրի երկաթգծի, Համահայկական բանկի եւ Հայկական աշխարհի սին առասպելների օգնութեամբ, իսկ այժմ՝ Ռուսաստանից, Չինաստանից եւ Համաշխարհային բանկից սպասուող վարկերի շուրջ պտտուող յուսադրիչ խօսակցութիւնների միջոցով: Որքան էլ, սակայն, իշխանութիւնները պնդեն, թէ միջազգային ֆինանսական ճգնաժամն առանձնապէս չի ազդել մեր երկրի տնտեսութեան վրայ կամ մենք յաջողութեամբ յաղթահարել ենք այդ ճգնաժամի առաջին արժիքը (թէեւ այդ պնդումը նրանց համար հասարակագործ է քաղաքական ինքնապայանութեան), անժխտելի է, որ իրականում Հայաստանում եւս գործունէնք ողջ աշխարհում դրսեւորուող միեւնոյն երեւոյթի, այն է՝ սոլարի գանգուածի կտրուկ նուազման հետ»:

«Հայաստանում, ի մասնաւորի, խօսքը վերաբերում է արտաքին առեւտրի բացասական հաշուեկշռի սպասարկման կենսական խնդրի: Անցեալ տարի այն կազմել է 3 միլիարդ տոլար, այսինքն՝ ներմուծուել է շուրջ 4 միլիարդ, իսկ արտահանուել՝ շուրջ 1 միլիարդ տոլարի պարանք: Պակասորդը կամ դեֆիցիտը մօտ երկու-երրորդով ծածկուել է տրանսֆերների, իսկ մէկ-երրորդով՝ միջազգային վարկերի, արտասահմանեան ներդրումների եւ զբօսաշրջիկութեան հաշուին: Եւ քանի որ, միջազգային ֆինանսատնտեսական ճգնաժամի պատճառով, դոլարի ներհոսքի այդ աղբւրներն զգալիօրէն նուազել են ու էլ աւելի նուազելու միտում ունեն, կառավարութիւնն այս տարի կանգնած է լինելու առնուազն 1,5-2 միլիարդ դոլար հայթայթելու խնդրի առջեւ, որը նրա ուժերից վեր է: Հետեւաբար, խնդրը լուծուելու է այլ ճանապարհով, այն է՝ ներմուծման ծաւալների շեշտակի կրճատմամբ, որը հանգեցնելու է կենսամակարդակի

կտրուկ անկման, եւ Հայաստանը ետ է շարտելու առնուազն 10-15 տարով՝ յայտնուելով 1990 ական թուականների երկրորդ կէսի վիճակում: Այսինքն, մենք գործ ունենք ոչ թէ անսպասելի աղէտի, այլ տրանսֆերային կապիտալի եւ քրէա-օլիգարխիկ համակարգի վրայ հիմնուած քոչարեանական արատաւոր տնտեսական մոդելի կամ փրկուածան հետ», - ասաց առաջին նախագահը՝ յաւելելով. - «Օբյեկտիւ եւ համակարգային հանգամանքներից բացի, խնդիրը բարդանում է նաեւ իշխանութիւնների վարած սխալ տնտեսական քաղաքականութեան եւ ճգնաժամային իրավիճակին ոչ համարժէք քայլերի պատճառով»:

«Երկիրն, իմ խորին համոզմամբ, ուղղակի գլորում է վիհը: Շատ շուտով կառավարութիւնն ստիպուած է լինելու հրաժարուել դրամի փոխարժէքի արհեստական պահպանման քաղաքականութիւնից: Ընդ որում, դրամն արժեզրկուելու է ոչ թէ սահուն կերպով, ինչպէս տեղի ունեցաւ ռուսական ռուբլու պարագայում, այլ պարզապէս գահավիժելու է»:

«Մի խօսքով, ի տարբերութիւն շատ այլ երկրների, Հայաստանը կանգնելու է ոչ թէ տնտեսական կայունացման, այլ պարզապէս հումանիտար աղէտի կամ գոյատեւման խնդրի առջեւ, որի լուծումը գերբնական ճիգեր է պահանջելու թէ՛ իշխանութիւնից, թէ՛ հասարակութիւնից»:

«Որոշ ժամանակ անց վճռական գործողութիւնների անցնելու եւ իշխանափոխութեան համար ստեղծուելու է բոլորովին մի նոր, շատ աւելի նպաստաւոր իրավիճակ», Լեւոն Տէր-Պետրոսեանը ասաց. - «Մի՞թէ դժուար է հասկանալ, որ մի քանի ամսից իշխանութիւններն ի ցոյց են դնելու իրենց ողջ մերկութիւնը: Ուժերից վեր խնդիրների եւ ներքին զգուշացումի պատճառով նրանք իրենք իրենց քանդուելու են: Եւ որքան մենք հանգիստ մնանք, որքան ինայնք մեր նեարդերը, այնքան աւելի շուտ են քանդուելու»:

ՏՈՒՆԻ ՏԱԳՆԱՊ ԵՐԵՒԱՆԵԱՆ ՇՈՒԿԱՅԻ ԿՐԱՅ

Մարտի 7-ին

ժէքի քաղաքականութեան, ինչ որ ամիսներ է իր վեր կ'առաջարկուէր Համաշխարհային Պանքի եւ Արժույթի Միջազգային Հիմնադրամի կողմէ:

«Խորհուրդը, քննարկելով համաշխարհային ֆինանսական եւ տնտեսական ճգնաժամի պայմաններում ստեղծուած իրավիճակը, արձանագրեց, որ Հայաստանի ֆինանսական համակարգը կայուն է, բաւարար կապիտալիզացուած է, գերիրացուելի է եւ պատրաստ դիմակայելու ճգնաժամի հետագայ մարտահրաւէրներին», - յայտարարեց Կենտրոնական Պանքի նախագահ Արթուր Ջաւադեան:

Կենտրոնական Պանքը, Ջաւադեանի խօսքով, պիտի չմիջամտէ. - «Բայց եթէ մենք տեսնում ենք շուկայում կտրուկ տատանումները, որ կարող են ունենալ շատ անցանկալի հետեւանքներ, այդ պարագայում մենք, իհարկէ, միջամտելու ենք... Դա վերաբերում է շատ վերեւ գնալուն էլ, ներքեւ

գնալուն էլ, որովհետեւ դա միանգամից անդրադառնալու է գների կայունութեան վրայ: Եւ մեր առաջնահերթ խնդիրը, մեր թիրախը այս պահին, գների կայունութեան ապահովումն է»:

Կեդրոնական Պանքի որոշումն անմիջապէս ետք, հայկական Դրամը կրեց սուր անկում, սոլարի դիմաց 308-էն իջնալով 390-400-ի:

Դրամի անկումին անմիջապէս յաջորդեց գինեւոր բարձրացում խանութներում մէջ: Իսկ, մարդիկ փողոցներու վրայ, թէ սրճարաններում մէջ կը քննարկէին ստեղծուած տագնապը:

«Այսպէս էլ պէտք է լինէր, քանի որ արհեստականօրէն ցածր էին պահուած սոլարի կուրսը, իսկ սրանից յետոյ ինչ կը լինի չգիտեմ, միայն նրա համար են ցաւում, որ շատ մարդիկ իրենց սոլարները սպառեցին ժամանակներով եւ հիմա ամբողջ տարուր գտնուում է մի քանի մարդկանց ձեռքին», - «Ա1+»-ին յայտնած է քաղաքացի Աւետ Բաղդասարեան:

ՔԱՂԱՔԱԿԱՆ

ՕՊԱՄԱ ԵՒ ՊԱՂԵՍՏԻՆ-ԻՍՐԱՅԷԼ

ՅԱՐՈՒԹԻՒՆ ՍԱՂԸՆԵԱՆ

Միջին արեւելեան տազնապարհ, այսինքն արաբ-իսրայելեան տազնապարհ Օպամայի իշխանութեան ժառանգած ամենահին տազնապարհ կը նկատուի: Ան սկսաւ մօտաւորապէս 60 տարիներ առաջ, արաբ-իսրայելեան առաջին պատերազմի աւարտական օրերուն, այսինքն 1947 տարին, որմէ ետք ստեղծուած տազնապարհ տակաւին կը շարունակուի առանց իր աւարտին հասնելու: Տեղի ունեցող յաջորդական պատերազմները, ամերիկեան, միջազգային, եւ միջին արեւելեան բոլոր ժողովներն ու «համաձայնութիւնները» անկարող եղան հիմնական եւ վերջնական լուծում մը գտնել ստեղծուած կացութեան, որ իր պարբերական բռնկումներով, փոքր կամ մեծ, ամբողջ շրջանը զբաղեցուցած է իր քանդումներով, մարդկային, տնտեսական գետններու վրայ: Ամենավերջինը որ տակաւին չէ գտած իր հանդարտեցումը կազա-իսրայել քանդիչ ընդհարում-պատերազմն էր, որուն նախորդած էր Լիբանան-իսրայել 2005-2006 ընդհարումը:

Ի հարկէ կողմերու միջեւ որոշ մօտեցումներ եւ ժամանակաւոր կարգադրութիւններ տեղի ունեցած են, սակայն, վերջնական խաղաղութիւն տակաւին չէ հաստատուած: 1992 Օսկոյի համաձայնութիւնը, պաղեստինցիներու եւ հրեաներու միջեւ, ապա Պիլ Գլին-թընի իշխանութեան հետ խորհրդակցութիւնները որոշ մեղմացում չառաջացնելէ ետք, անիւր կրկին վերադարձուցած են տազնապարհ եւ քանդումներու:

Ի՞նչ է ԿԱՅՈՒԹԻՒՆԸ ՆԵՐԿԱՅԻՍ

Տասնամեակներու վրայ երկարող շփումներու իբրեւ արդիւնք, թուղթի վրայ համաձայնուած կարգադրութիւնը երկու դրացի, Պաղեստին եւ Իսրայել պետութեանց ստեղծումն է, որոնց իրարու հետ խաղաղ գոյակցութեամբ, եւ համաձայնաբար ամբողջ շրջանէն ներս խաղաղութիւն պիտի ստեղծեն: Այս մէկը տակաւին անկարելի թուող երազ մըն է, քանի որ այդ ուղղութեամբ նախատեսուած բոլոր քայլերը մինչեւ այսօր ապարդիւն մնացած են:

Պէտք է ըսել որ երկու կողմերէն ներս ալ, թէ պաղեստինեան եւ թէ Իսրայելեան, ողջախոհութեան եւ երկուստեք լուծումներու հասնելու տրամադրութիւններ չեն պակսիր, սակայն հիմնական տուեալներ չեն ստեղծուիր կամ որդեգրուի վերջնական խաղաղութիւն մը ձեռք ձգելու համար: Առճակատման կողմերը շատ աւելի գործունեայ եւ աշխոյժ կը մնան քան թէ խաղաղութիւն փնտռողները: Միջազգային գետնի վրայ, Ամերիկան, որ իբրեւ միակ գերզօր տէրութիւն, կրնայ, եւ կը փորձէ խաղաղութիւն մը ստեղծել շրջանէն ներս, հիմնական յանցանքէ մը կը տառապի: Ամերիկայի կեցուածքը այս տազնապարհ նկատմամբ հիմնականին մէջ Իսրայելի կողքին գտնուիլն է, այնքան մը որ Իսրայել կը նկատուի յաճախ Ամերիկայի մէկ նահանգը: Այս կը նշանակէ որ այս մեծ երկիրը անհաւասար դիրք մը

բռնած է, թէեւ միշտ ալ երկուստեք ուզած է շփումներ ունենալ, լուծումի մը փնտռողներն մէջ: Այս իմաստով, նոր, Օպամայի իշխանութեան արտաքին գործերու նախարար Հիլըրի Գլինթըն արդէն իսկ կը գտնուի Մերձաւոր Արեւելքի մէջ, եւ իրմէ առաջ ալ, փորձառու միջնորդ ձորճ Միչըլ աչցելած էր այդ շրջանը: Ըստ երեւոյթին, հակառակ թէ Օպամայի եւ թէ Հիլըրիի փոփոխութեան արտայայտութեանց, նախքան ընտրութիւնները, ներկայիս փորձ մը կը կատարուի, երեւութապէս առարկայական, նոր միջոցներ փնտռելու փափաքելի երկու պետութիւններու, պաղեստինեան եւ Իսրայելեան ստեղծման համար: Պէտք է յուսալ որ այս նոր սկսուած շփումները շօշափելի արդիւնքներու կը հասնին:


Մինչ այդ, կացութիւնը եր-

կու կողմերու միջեւ, բաւականին յուսահատական է: Իսրայելեան ճակատի վրայ, վերջին ընտրութիւնները իշխանութեան բերին «կարծր» կառավարութիւն մը, Նաթանիաւուի ղեկավարութեամբ, որ յաջորդելով նոյնքան անգիջող Օլմերթի կառավարութեան, շատ յոյսեր չի ներշնչեր մեղմացումի նպատակով: Պաղեստինեան ճակատի վրայ գոյութիւն ունին երկու մօտեցումներ, Ֆաթահի ղեկավար Մահմուտ Ապպասը մէկ կողմէ, որ համաձայն կը թուի ըլլալ Իսրայելի հետ հաշտութեան դաշինքի մը ստեղծման համար: Իսկ միւս կողմէ կայ «Համաս»ը, շատ աւելի բիրտ կեցուածքով, որ 2005 թուականին, կազաչէն դուրս վռնտեց Ապպասի իշխանութիւնը եւ անգիջող կը գտնուի Իսրայելի հետ համաձայնութեան մը գալու: Տակաւին «Համաս»ը ինքը երկու ճակատի բաժնուած է, մէկը Դամասկոսի մէջ գտնուող, իսկ երկրորդը, կազաչի մէջ, որոնց միջեւ

հասկացողութիւն գոյութիւն չունի թէ իրարու, եւ թէ Իսրայելի հետ լեզու գտնելու:

Անդին կան արաբական երկիրները, որոնց մեծ մասը համաձայն են Իսրայելի հետ խաղաղութեան մը ստեղծման, բացի անշուշտ Իրանէն որ տակաւին կը խօսի Իսրայելը «բնաջնջելու» մասին: Սէուտական Արապիան ինքը եւս առաջարկ մը ունի խաղաղութեան համար, պայմանաւ որ հողային փոխանակման սկզբունքը ընդունուի:

Պէտք է յուսալ որ Միչըլի եւ Հիլըրիի Մերձաւոր Արեւելք շրջապտոյտները իրենց առարկայական եւ շօշափելի արդիւնքները կու տան, տազնապարհ Մերձաւոր Արեւելքէն ներս խաղաղութեան մը փնտռողները գծով: Արդեօ՞ք որքան անկեղծ են Օպամայի խոստումները Միջին Արեւելեան տազնապարհ լուծման համար: Կը սպասենք:



Ս. Գ. Հ. Կ.

**ԱՐՄԷՆ ԿԻՏՈՒՐ ՄԱՍՆԱՄԻՒՂ
Կլեմտէյլ, Քալիֆորնիա**

«ՀԱՅ-ԹՈՒՐԲ

ՓՈՒՍ-ՅԱՐԱԲԵՐՈՒԹԻՒՆՆԵՐ»

Հ Ր Ա Պ Ա Ր Ա Կ Ա Յ Ի Ն Ք Ն Ն Ա Ր Կ ՈՒ Մ

Կը մասնակցի՞մ՝

ՅԱՐՈՒԹ ՍԱՍՈՒՆԵԱՆ

Խմբագիր եւ քաղաքական տեսարան

ԶԱԻԷՆ ԽԱՆՃԵԱՆ

Մտատրական, գրքի թեղիմակ

ՏՕՔԹ. ՀԱՄԲԻԿ ՍԱՐԱՖԵԱՆ

Հասարակական գործիչ

Համադրող՝

ՏՕՔԹ. ՅԱՐՈՒԹԻՒՆ ՍԱՂԸՐԵԱՆ

Ուրբաթ, 3 Ապրիլ, 2009

երեկոյեան ժամը 8.00-ին

Կլեմտէյլի Կեդրոնական Գրադարանին մէջ
222 East Harvard Street, Glendale

ՄՈՒՏՔԸ ԱԶԱՏ

ՀԻՒՐԱՍԻՐՈՒԹԻՒՆ

ԳՐԱԿԱՆ

ԳԻՏԱՊԱՏՈՒՄ

ՆՈՅ ՆԱՐԱՊԵՏԻ ՎԵՐԱԴԱՐՁ

Նախորդ համարով.- Արմավիրի բնակիչ Նորայր, իր քննարկած վիճակով, կը փոխադրուի տիեզերանավ մը մերս ուր երկարամտորուս առոյգ ծերունի մը ինքզինք կը մերկայացնէ որպէս Նոյ մահապետ: Նոյ իրեն կը պատմէ թէ ինչպէս, Մեծ Ջրհեղեղէն երեք հարիւր յիսուկ լուսնային ամիսներ ետք, արտերկրեայ լուսեղէն էակներ գինք գիշերանց փոխադրեցին իրենց տիեզերանավը եւ վերակենդանացուցին: Ապա գինք տարին Տիեզերապետին մօտ, որու յանձնարարութեամբ հիմա փրկարար առաքելութիւններ կը կատարէ տարբեր մոլորակներ, որոնց բնակիչները գոյատեւման կենցաղ-մահու լուրջ խնդիրներ կը դիմագրաւեն:

Ս. Թ.

ՄԱՀԱԿԹՈՒԹՅԱՆ

(Շարունակումս խորագրի էն)

ԲԱԶՈՒՄ ՄԵՂՔԵՐ ՄԱՐԴԿԱՅԻՆ

Նորայր շունչը բռնած կը փորձէր հետեւիլ՝ առանց դադարի մէկը միւսին յաջորդող զգայազրկիչ անակնկալներու այս առեղծուածային շարանին - եւ զանոնք շողկապող ներքին իմաստի կորիզը գտնել իր տեսածներուն ու լսածներուն մէջ: Միտքէն էլք որոնող հարցումը առկա մնաց չրթնեւրուն ծայրը, քանի սպիտակահերը նոյն ակնթարթին արդէն դարձեալ կուհած էր գայն: Աւելի ճիշդը՝ բառ առ բառ գայն կարդացած էր Նորայրի ուղեղի յետին ծալքերուն մէջ ընթացող ելեկտրոնահոսքերէն: Ու պատասխանեց հատիկ-հատիկ, իրարմէ անջատ հաստիկութեամբ արտաբերուած բառերով, դանդաղորէն.

- Ինչպէս չի շեղի քիչ առաջ, յաճախ կը ստիպուինք փրկարար առաքելութիւններով օգնութեան փութալ տարբեր աստղերու մոլորակներու վրայ ոչնչացման լուրջ վտանգներ դիմադրաւող քաղաքակրթութիւններուն: Հիմա Երկիր մոլորակը ժամանած էմ յատուկ գործուղմամբ գոր ինծի վստահած է Տիեզերապետը: Առաքելութիւնս հետեւեալն է: - Ես պատրաստելու եմ հաշուետու գեկուցում մը Երկիր մոլորակի ներկայ շատ լուրջ ճգնաժամի առնչութեամբ: Զեկուցումիս գլխաւոր թէգերն են.

- Առաջին՝ Տիեզերապետը գրեթէ համոզուած է - բայց կ'ուզէ կատարելապէս ստուգել - թէ ձեր մոլորակի մեծ կոչուած անփորձ եւ անղէկ պետութիւններու կարծատես իշխանութիւնները բացարձակապէս անտեղեակ են իրենց յանձնուած պատասխանատուութեան պահանջներէն: Այս պատճառով, Երկիր մոլորակի վրայ կեանքի գոյատեւումը, լաւագոյն պարագային, մէկ դարը չի կրնար անցնիլ եթէ մարդկութիւնը յամառի շարունակել անձնասպանական իր ներկայ տխմար ընթացքը: Այսինքն, եթէ մարդիկ յամառին անձնատուր

ըլլալ ու մնալ՝ վախի, ազահու-թեան եւ ուժի ինքնանպատակ, անբանացուցիչ մտասեւեռումներուն: Եթէ անոնք կուրօրէն շարունակեն՝ դրամատուներու մէջ առասպելական դրամաթուանշաններ «սեփականացնելու» եւ կուտակելու ցնորական խաղը, եւ այդ մտապատրանքին համար անշնչելի հողագործի վերածել իրենց պարած մոլորակը: Երկիր մոլորակին վրայ կեանքի շարունակութիւնը հիմա վտանգուած է ոչ միայն մարդու կողմէ ստեղծուած աղէտներու հետեւանքով, այլ նաեւ երկրորդ պատճառով մը որ բոլորովին տարբեր բնոյթ ունի եւ արեգակնային հեռուաւոր ամալութիւններէն կը խուժէ դէպի Երկիր: Այն Մեծ Ջրհեղեղը որուն ես ակնատեսն եղայ եւ որմէ պատասպարուելու համար իմ տապան-նաւը շինեցի, իր բուն սկզբնակէտն ունեցաւ Հնդկաց Ովկիանոսին մէջ, Մատակասբար կոչուած կղզիի բաւական մօտերը: Ովկիանոսի այդ վայրը աննկարագրելիօրէն ուժգին բախումով ինկաւ մէկը այն վիթխարի աստղակերպերէն⁽¹⁾ - աւելի ճիշդը՝ մոլորակակերպերէն⁽²⁾ - որոնց ուղեծիրերը կը տարուբերին Երկրի եւ Արեւի միջեւ տարածուող գոտիին մէջ: Ովկիանոսն ինկող այդ ժայռաբեկորին չափերը մէկ քիլոմետրի կը հասնէին: Անկման տարածքին վրայ յառաջացած ծայրայեղ ջերմաստիճանին հետեւանքով ջուրը կ'եռար դէպի Երկիրը բորակական թթուի⁽³⁾ եւ բորականման թթուի⁽⁴⁾ հսկայական ժայթքերու շարունակներով: Յառաջ եկող թթուային անձեռեւեները⁽⁵⁾ ելեկտրական բարդերու մէջ գործածուող թթուին չափ այրող ու մաշեցնող⁽⁶⁾ էին: Դէպի ցամաքամասերն արշաւող ովկիանոսի ցունամի լեռնանման ալիքները մինչեւ երկու հարիւր մետր բարձրութեան կը հասնէին: Երկարատեւ տանամեակներու ընթացքին մոլորակին երկինքները միբճուեցան ամբողջական մութի եւ խաւարի մէջ. իսկ Երկիրը պատեց համատարած խստագոյն ցուրտը՝ ցամաքէն

շատ վեր ծփացող փոշիներու, տարուբերուող բեկորներու եւ թռչող խլեակներու հետեւանքով: Աշխարհի ամբողջ տարածքին, վերջը չէր տեսնուեր տեղատարափ երկարատեւ անձրեւներուն: Անծայրածիր տարածութիւններու վրայ մեծածաւալ աւերներն ու զանգուածային մահերը յաջորդեցին՝ չընդհատուող ձմեռներուն եւ ամենակուլ սովին: Այս բոլորն ալ Մեծ Ջրհեղեղի մաս կազմող պատուհաններն են, որոնց յաջորդեց ինձ հետ վերապրողներու շինարար խաղաղ կեանքի ժամանակաշրջանը արարտեան դաշտի վրայ, ապա շրջակայքը եւ հեռուոր երկիրներ: Հիմա, սակայն, Երկիր մոլորակին վրայ խոնուած գրեթէ եօթը միլիարդ մարդերու ապականող կենսաձեւն ու փորձագիտական վտանգաւոր գործողութիւնները անբնական լի դարձնելու վրայ են հողագործը: Ձեր թոռներն ու ծոռները չեմ կարծեր որ կենդանի մնան 2,100 թուականէն ետք, եթէ ճգնաժամէն առաջ անհրաժեշտ միջոցառումները չըլլան՝ առաջին առնելու համար մարդու տիմարութեան կամ անջրպետի խորութիւններէն գալիք ստոյգ աղէտին: Թէեւ բաւական ուշացած էք արդէն, սակայն հաւանաբար երկու աղէտներէն որեւէ մէկուն պարագային կարելի է դեռ գործի դնել կանխարգելիչ անհրաժեշտ արմատական միջոցները - բացարձակ այն նախապայմանով որ աւելի չձգձգուին անոնք:

- Երկրորդ՝ ժամանակ չկորսնցնելու համար, անհրաժեշտ է անմիջապէս պաշտօնանկ ընել Երկիր մոլորակի ժամանցուած անջատանջատ պետութիւններու այն բոլոր վտանգաւոր մենատէրերը որոնք պատասխանատու են ներկայ այս դժուար յաղթահարելի ճգնաժամին: Չարակամութեամբ կամ տգիտութեամբ Երկիրն ու ժողովուրդները բռնաբարող, իրենց քթին ծայրն իսկ չտեսնող այս գահակալ յիմարներէն պէտք է ազատարարել անմիջապէս՝ եթէ կ'ուզէք որ գոյատեւեն Երկիր մոլորակն ու իր վրայ կիսամեռ դեռ քարշ տուող կենսատեսակները, ներառեալ խելամիտ Մարդատեսակը⁽⁷⁾: Այլեւս պատմութեան թանգարաններու երկաթէ վանդակներէն դուրս գալու արտօնութիւն պէտք է տրուի այնպիսի վտանգաւոր ծաղրածուներուն, ինչպիսիք են ներկայիս երկրային շարք մը մեծ կոչուած պետութիւններու իշխանութեան վրայ գտնուող նախագահներ, վարչապետներ եւ այլ պատասխանատուներ: Ես մէկիւր-մէկին այցելելու եմ այս տխմարները՝ իրենց հասկցնել փորձելու համար կացութեան

լրջութիւնը: Կը տեսնես թէ որքան դժուար ու տաղակալի է գործս: - Երրորդ՝ Տիեզերապետը զգայական որոշ տկարութիւն մը ունի Մեծ Ջրհեղեղէն վերապրած եւ տապանէն դուրս ելլելէ ետք Արարատի շուրջ հաստատուած ժողովուրդի յաջորդ սերունդներուն հանդէպ: Ան բաւական խոր տխրութեան պահեր անցուց երբ անոնց պատկանող մէկուկէս միլիոնէ աւելի անմեղներու արիւնը կարմիրով ներկեց Եփրատ գետի ջուրերը՝ կրօնական տգիտութեամբ եւ ազգայնա-մոլեռանդութեամբ կուրացած հարեւաններու ձեռքերով: Տիեզերապետը կ'ուզէ ճշգրիտ տեղեկութիւններ ունենալ թէ այսօր զարգացման ի՞նչ մակարդակի հասած են՝ տապանէն դուրս ելած երկոտանի, չորքոտանի եւ բազմոտանի կենդանատեսակներու սերունդները: Խօսքը մէջերնիս, Ան այս տեղեկութեան յատուկ կարեւորութիւն կ'ընծայէ, որովհետեւ իր ականջին կարգ մը փսփսուքներ հասած են թէ պատրաստուելու վրայ է արարատեան դաշտի հին սերունդներէն վերապրած բնակիչներու բնաջնջման նոր, ահաւոր ծրագիր մը: Մրագրի գործօն հեղինակներն են՝ կրօնական մոլեռանդութեան դրօշի տակ համախմբուած մարդկային հօտերու կայսրութիւններ երազող հարեւան կարգ մը խաւարամիտ քաղաքագէտներ: Իսկ անոնց սատարողներն են այի մը տեղական ազահ քաղաքագէտներ որոնք պատրաստ են իրենց երկիրն ու ժողովուրդը ծախելու՝ փոխան երեսուն արծաթի: Մեր տիեզերանաւի հեռասարքերը մնայուն կերպով հսկողութեան տակ պահած են այս անուղղալ ցնորամիտները, եւ յուսադրիչ ոչինչ գտած են անոնց վարքուբարքին մէջ մինչեւ այսօր: Նոյնպէս՝ այսուհետեւ: Անոնց գոյատեւումը մահացու սպառնալիք մըն է ոչ միայն ձեր ժողովուրդին համար, այլ նաեւ Երկիր մոլորակի վրայ ապրող բոլոր կենսատեսակներուն: Հետեւաբար, արմատական լուծում մը պէտք է գտնէք այս շարիքին:

- Չորրորդ...: Բայց այստեղ, տակաւ սրող իր հետաքրքրութիւնն ու բազմամաս հարցումները աւելի երկար զսպելու անկարող, Նորայր իր խօսակցիցն ընդմիջեց տարերային պոռթկումով.
- Սիրելի Նոյ նահապետ, քու արծարծած խնդիրները շատ տեղին են, եւ իմ մտածումներուս հետ՝ հաշտ ու զուգահեռ: Սակայն այս բոլորին բազմաթիւ հարցեր

Շարք էջ 17



Blue Cross of California
Authorized Agent



Blue Shield of California
Authorized Agent

SERVING SINCE 1975

BEDROS S. MARONIAN

(818) 500-9585
BMaronian@AOL.com

FAX 500-9308 ABA INSURANCE SERVICES 805 E. Broadway . Glendale, CA 91205

ԵՐԲԵՔ ՈՒՇ ԶԷ ՎԵՐԱՔՆՆԵԼՈՒ ԶԵՐ ԱՊԱԹՈՎԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ





A.B.A. INSURANCE SERVICES

ԳԱՂՈՒԹԱՅԻՆ

ԼՈՍ ԱՆՃԵԼՈՍԻ ՀԱՅ ՔՈՅՐԵՐՈՒ ՎԱՐԺԱՐԱՆԻ ՎԱՐԴԱՆԱՆՑ ՏՕՆԱԿԱՏԱՐՈՒԹԻՒՆԸ

ԼԻՆՏԱ ԳԱՆՏԻԼԵԱՆ

Հայ Քոյրերու Վարժարանի աշակերտութիւնը Փետրուար ամսուան ընթացքին կը պատրաստուի տօնելու Վարդանանց պատերազմի անմար չիշատակը: Եթէ նոյն ամսուն դպրոց այցելէ՞ք՝ պիտի լսէք ամէն դասարանէ վարդանի զովքը հիւսող կամ ճակատամարտի պատ-

գունաւորեն, որոնցմով կը զարդարուի դպրոցի բոլոր միջնացքները, դասարաններն ու սրահը, տակաւին բարձր դասարնի աշակերտները կը խորհրդածեն 451 թուականի այդ միօրեայ բայց մահու կենաց կարեւորութիւն ունեցող ճակատամարտին մասին եւ կը գրեն իրենց խորհրդածութիւնները:



մականը ընող ոտանաւորներ, որոնք այնքան հպարտութեամբ եւ խիզախ արտաշայտութեամբ կ'արտասանեն մանակապարտէզի մանուկներէն մինչեւ ութերորդ կարգի պատանիները: Ամբողջ ամիս մը Հայերէն լեզուի ուսուցիչներ վարդանի նուիրուած ոտանաւորներ կը սորվեցնեն, հարց պատասխաններ,

Դ.Դէմիրճեանը փաստում է, որ Թումանեանը այնքան էր սիրուած, որ դարձել էր «Թեկնածու Հայաստանի գահի»: Նրան դիմում էին բոլորը՝ մեծից փոքր, նախարարից, դեսպանից ու քաղաքապետից մինչեւ հասարակ գիւղացին: Գրողները նրանից նպաստ էին խնդրում կամ փոխատուութիւն, որբերը՝ որդեգրել ու խնամել, տարբեր հասարակական ընկերութիւններ, դպրոցներ, ուսուցիչներ խնդրում էին իշխանութիւններից ու պետութիւնից նիւթական միջոցներ հայթայթել: Գիւղացին խնդրում էր իր հոգար թեթեւացնել, գործազուրկը՝ աշխատանքի տեղաւորել, ռազմաճակատից գինուորը խնդրում էր տաք հագուստով եւ ուտելիքով ծանրոց

ուղարկել, գտնուած ժողովուրդները նրա հրահանգին էին սպասում սրերը դնելու համար: Եւ Թումանեանը աշխատում էր ամէնքին հասնել, հաշտեցնում էր գտնուած, միմիանցից նեղացած գրողներին ու գործիչներին, լրագրողներին ու նոյնիսկ ամբողջ կուսակցութիւնների, համոզում էր եւ ժպիտով ու բարի խօսքով ստիպում տիրապետել ներելու արուեստին: Եւ հաշտարարի իր բուն գործունէութեամբ ուզում էր իրականացուած տեսնել հաշտ ու խաղաղ մարդկութեան իր նուիրական երազը:

Ամէնքին ու ամէն ինչ հաշտեցնելը, ամէնուր խաղաղութիւն հաստատելը, նոյնիսկ մարդուն եւ բնութեանը հաշտեցնելը՝ բարձրագոյն երջանկութեան հասնելը Թումանեանի համար թէ՛ կեանքի եւ թէ՛ գեղագիտական նպատակ էր: Վերջինս բխում էր նրա մեծ ցանկութիւնից՝ ազատագրուելու մարդկային յարաբերութիւնների քառսից, բարոյական կեղտից ու ապականութիւնից, որով շրջապատուած էր: Դատապարտելով մի կաթիլ մեղրի համար պատերազմողներին, Թումանեանը ձգտում էր մարդկային հասարակութեան համար հոգեւոր վերելքի սկիզբ դնել եւ իրենով ու իր ստեղծագործութեամբ՝ կանգնած երկու դարի սահմանագծում կամըջում էր գալիքն ու անցեալը՝ հաշտեցնելով նաեւ ժամանակները, անցողիկն ու յաւիտենականը:

Ահա թէ ինչու Թումանեանը միշտ մեզ հետ է եւ մենք նրա հետ ենք: Նա մեզ սովորեցնում է դէպքերին նայել ոչ թէ ժամանակաւոր տպաւորութեան ու խաբուսիկ շղոթութեան տեսակէտից, այլ մեր ժողովրդի արմատական շահերի, նրա գոյութեան ու զարգացման պատմական հեռանկարի դիրքերից:

Ծանր փորձութեան պահերին միշտ էլ մենք կարող ենք դիմել Թումանեանին եւ պարզել, թէ ինչ կ'անէր նա մեր փոխարէն, որովհետեւ ոչ ոք աւելի իրաւունք չունի լինելու հայ ժողովրդի հոգեւոր առաջնորդն ու ուսուցիչը, քան Թումանեանը, ոչ ոք չի կարող հաւատի ու մաքառման, հայրենա-



սիրութեան եւ ողջախոհութեան աւելի հզոր աղբիւր լինել մեզ համար, ինչպէս Թումանեանը իր գրական ժառանգութեամբ եւ իր կենսագրութեամբ: Որովհետեւ մեծ էր ոչ միայն Թումանեան-գրողի, այլեւ Թումանեան-մարդու հրաշքը, նրա հոգուց շրջապատի վրայ շուրջօրէն տարածուող լոյսը:

1914-1915 թթ. Թումանեանը արիւնների ու աւերների միջով գնաց Արեւմտեան Հայաստան եւ ականատես եղաւ մեծ եղեռնից դատարկուած ամալի գիւղերի սահմուկեցուցիչ պատկերներին: 1915 թ. նա որդեգրեց երեք շնորհալի ստեղծագործող որբ երեխաների եւ հասցրեց նաեւ հողին յանձնել իր որդեգիրներից մէկին՝ Միհրան Թիւթունջեանին: Պահպանուել է այդ թաղման լուսանկարը, որը մի էջ է, մի վաւերագիր մեր պատմութիւնից՝ թաղման թափօր, որտեղ բոլոր յուղարկուողները երեխաներ են եւ միայն Թումանեանի հասակն է բարձրանում 2-3 գլխութեան քոչրերի հետ: Թումանեանը ոչինչ չի խնայել իր հայրենիքի ու ժողովրդի համար: Այսօր առանց յուզմունքի անհնար է ընթերցել գորավար Անդրանիկին գրած բանաստեղծի նամակը. «Ահաւոր մոմենտի առաջ ամէն մարդ պէտք է ընդհանուր սեղանին բերի ինչ-որ ունի եւ կարող է՝ թէ վերահաս վտանգը կանխելու, թէ բաղձալի խաղաղութեանը հասնելու համար: Ես չորս տղայ ունեմ, չորսն էլ երկրի կառավարութեան, Ազգային խորհրդի եւ քո տրամադրութեան տակ են, իսկ չորս աղջիկս էլ

Մար.ք էջ 15

STUT'Ք
ԵՐԹ
BANKRUPTCY-Ի
ՕՐԵՆՔՆԵՐԸ
ԿՕԳՆԵՆ ՁԵՁԻ,
ՉԱՆԳԱՅԱՐԷՔ

JANSEZIAN LAW FIRM, PC

If you're facing overwhelming debts, bankruptcy laws may eliminate all your debts permanently!

225 South Lake Avenue, Third Floor, Pasadena, California 91101

Call Now for a FREE Consultation: 626-432-7209

Nazareth V. Jansezian, Esq.

100-ԱՄԵԱԿ

ԱՄԵՆԱՅՆ ՅԱՅՈՑ ԹՈՒՄԱՆՅԱՆԸ

Շարունակում է 14-էն

պատրաստակամ գնում են թիկունքի աշխատանքներին: Ես էլ անշուշտ սրանից թանկ ոչինչ չունեմ: Հետեւաբար ոչինչ չեմ խնայի...»: Ինքն էլ պատրաստ է հետեւելու Անդրանիկի ձայնին եւ կամաւոր տուրք է վերցնում ամիսը 100 ռուբլի փոխանցել «ընդհանուր գանձարանին»:

Հետագայում բանաստեղծի մահից յետոյ Անդրանիկը գրում էր. «Թումանեանը կրնար երջանիկ կեանք ապրել, կրնար ամառանոցներու ու հանքային ջրերի հեշտանքը վայելել, կրնար հարստանալ եւ փառքերու տիրանալ, բայց այս բոլորը արհամարհեց իր ցեղուն բեկորներուն համար, տքնելով անոնց հետ՝ անոնց ցաւն ու վիշտը բաժանելով»:

Տառապելով հայոց վշտի մեծ ծովի մէջ, Թումանեանը վերաստեղծում է իր ապրած ժամանակի հայոց ողբերգական կեանքի պատմութիւնը, բայց չի համակում լալկանութեամբ եւ յուսահատութեամբ, իր մէջ «մի գարհուրելի լոյս էր ծագել»: Իր կեանքում ու արուեստում ստեղծած բարձր ու անարատ մարդու մոտիվը մեր օրերում էլ նոյնքան հրատապ է, որքան այն օրերին, քանի որ միայն այդ ճանապարհով կարելի է բարոյապէս հզօրացնել ժողովրդին: Թումանեանի կատարելութիւնը հենց իրենով, իր ապրած ու չապրած, բայց երազած կեանքով իմաստ ու կենդանութիւն է տալիս մեր այսօրուայ իրականութեանը: Թումանեանի կենդանի բարձր ներկայութեամբ է գալու մեր իսկ ինքնաճանաչումը, որովհետեւ այդ նրա մէջ էին խաչաձեւում անցեալը ու ներկան, ազգայինն ու համամարդկայինը:

Թումանեանը պայքարում էր իր դարի բարոյական հիւանդութիւնների դէմ, որոնք այսօր էլ ուղեկցում են մեզ: Դրանք բուժելու նպատակով առաջարկում էր արժեքաւորել ազգի բարոյական հարստութիւնները, մշակոյթը: Այդ դեղատոմսը ուժի մէջ է նաեւ այսօր: Թումանեանի համար բարոյական աղէտ էր ուրախութեան ու գուարթութեան վերանալը, սարսափների աւելանալը, արատաւոր աշխարհն ու անարդար կեանքը:

Այսօր նոր ուժով է ընդգծւում Թումանեանի նշանակութիւնը հայ ժողովրդի հոգեւոր կեանքում: Մեզ օղի պէս անհրաժեշտ է մարդու եւ կեանքի նրա աշխարհըմբռնումը, նրա միասնութեան, համերաշխութեան, սիրոյ, արդարութեան երազանքի ձգտումն ու խորհուրդը: «Ոչ ոք իրաւունք չունի լինելու հայ ժողովրդի հոգեւոր ուսուցիչը աւելի, քան Թումանեանը, ոչ ոք չի կարող աւելի օգնել մշակելու ազգային ճիշտ վարքագիծ», - գրում է Է. Զրբաշեանը:

Այդ իրաւունքը Թումանեանը նուաճել է ոչ միայն իր հայրենասիրական պոէզիայով, այլեւ ազգի ու հայրենիքի հանդէպ անձնագործ ու անմնացորդ նուիրումով: Չէ որ նա միշտ՝ իրաւաբանի լեզուով ասած՝ դէպքի վայրում էր, որտեղ օրհաս էր: Դեռ 18-19 տարեկան հասակում Թումանեանը վաճառել էր իր վերարկուն եւ այդ գումարով ատրճանակ գնել, որ գնա Արեւմտեան Հայաստանը ազատագրելու: Բայց նրա նշանադրութիւնը Օլգայի հետ եւ վաստառող վիճակը խանգարում են Թումանեանին գնալ

Ալ.Գոյոլեանի այն խմբի հետ, որի հետ ունէր պայմանաւորուածութիւն: Եւ այդ նշանադրութիւնը եղաւ մեր ժողովրդի բարեբախտութիւններից մէկը, որովհետեւ վան մեկնող խմբի բոլոր անդամները սպանուեցին:

Կուսակցական ցանկացած վերարկու նեղ էր գալիս Թումանեանի ուսերին, որովհետեւ նրան միշտ առաջնորդում էր հայրենիքի ու ժողովրդի շահը, հակառակ դէպքում էլ լինի ամենայն հայոց: «Տօ հնչակեանս որն է, դաշնակցականս՝ որը»: Նրա քաղաքացիական պարտքի զգացողութիւնը ստիպում էր նրան վեր կանգնել կուսակցական նեղ շահերից: 1921 թ. կոմունիստներին ուղղուած իր թամադայական խօսքում Թումանեանը ասում է. «Ինչպէս իւրոտ ձուն ներկ չի վերցնում, այնպէս էլ ես չկարողացայ այս կամ այն կուսակցութեանը յարել»: «Ես ինքս անցել եմ գրեթէ բոլոր կուսակցութիւնների միջից, թէեւ շատ արագ ու թեթեւ եւ չեմ կարողացել մերուել ու ձուլուել մէկի հետ... Եւ կապուած եմ եղել ոչ թէ ծրարապէս, այլ լոկ ընկերական եւ կոնկրետ գործի շուրջը»: Այդ կոնկրետ գործերից մէկը 1905-06 թթ. Լոռու եւ Ղազախի, Բորչալուի շրջանում հայութեան ինքնապաշտպանութեան կազմակերպումն էր: Գործ, որը դեկաւարում էր դաշնակցութիւնը, ուրեմն Թումանեանը նրանց հետ էր եւ ստանձնել էր Շուլավերի եւ Լոռու շրջանային դաշնակցական կազմակերպութեան նախագահի պաշտօնը: Աւելին, Թումանեանը եղաւ այն միջնորդը, որը պիտի հաշտեցնէր դաշնակցութեանը եւ կաթողիկոսին: Ձե՞ որ ընկերներին, իշխանութիւններին, կուսակցութիւններին ու ազգերին հաշտեցնելը Թումանեանի պարտքն էր:

«Վրէժիւնդութիւն, քէն, ատելութիւն, չարիք եւ նախանձ՝ կեանքի այս զգացումները անձանթ էին իրեն: Բիւրեղի պէս մաքուր ու պարզ էր իր սիրտն ու հոգին... տիպար հայ էր՝ ազգասէր ու գործունեայ», - գրում է Անդրանիկը:

Ահա թէ ինչու Թումանեանի իմաստութիւնը այսօր էլ սովորեցնում է լինել միաբան ու համերաշխ, բուռնցքուել ազգովի: Թումանեանի անսահման բարութիւնը դրսեւորում էր նաեւ իշխանութիւններին ու կառավարութեանը քննադատելիս, ինչը նա արել է բազմիցս: 1918 թ. աշնանը Անդրանիկին գրած նամակում դժգոհում է. «Մեր ազգային խորհրդի եւ մեր կառավարութեան ապիկարութիւնների եւ յանցաւոր գանցաւորութիւնների մասին կը խօսենք, երբ կը պատահենք: Եթէ գրեմ, ոչ ժամանակ կայ, ոչ էլ թուղթը հերիք կ'անի»: Ընդորոնում այս սողերը գրում է հայրը, որը մի քանի օր էր ինչ լրագրում պատահաբար կարդացել էր որդու՝ Արտաւազգի դազանաբար սպանուելու գոյժը: Բայց նոյն այդ պահին նա պատրաստում էր բանակցելու օտարազգի դիւանագետների հետ յանուն հայ-վրացական ընդհարումների դադարեցման. «Այժմ սպասում եմ յունական եւ ֆրանսական դեսպաններին, գալու են մօտս»:

Թումանեանը դէմ էր քաղաքական խնդիրները մարդկային կեանքերի գնով լուծելուն եւ համոզում էր, որ «Ինչ-որ լաւ բան է լինելու, լինելու է սիրով, իսկ սրով - երբէք»:

Թումանեանը ուզում էր փո-

շը վարդի փոխել, իսկ գազանին մարդու՝ արարչական երգով, արուեստով, գեղեցիկի ու բարու յղթմանակով: Նա գրում է. «Աշխարհքի բոլոր վէճերը վճուում են կամ բանակցութիւնով, կամ ուժով: Առաջին միջոցը յատուկ է մարդուն, երկրորդը՝ անասունին, աշխարհքների կառավարիչները գերադասում են միջոցը, որը յատուկ է անասունին, այսինքն ուժը: Կառավարելու ուրիշ եղանակ դեռ չեն գտել ու չեն հասկանում եւ դեռ հպարտանում ու պարծենում են դրանով»:

Թումանեանը Հայաստանի կառավարութեանը նոյն խստութեամբ քննադատում էր նաեւ այն ժամանակ, երբ իր որդին՝ Արեգը այդ կառավարութեան անդամ էր եւ նախարար: «Իշխանութիւնը մարդկանց կուրացնում է, եթէ մարդիկ աւելի փոքր են, քան իրենց պաշտօնը, հարբեցնում է, եթէ աւելի տկար են, քան իրենց պաշտօնը: Ես հաւատում եմ, որ դու քո պաշտօնից միշտ բարձր կը մնաս»:

Բայց որքան էլ Թումանեանը քննադատէր Հայաստանի իշխանութիւններին, նա այդ անում էր սրտի խոր կսկիծով ու ցաւով, փորձում էր օգտակար լինել գործով, անել այն, ինչ իր խորին համոզմամբ, չէր անում իշխանութիւնը: Այդ պատճառով էր դարձել «Վշտապատում» բիւրոյի, այսինքն, հայ ժողովրդի կրած վնասները ցուցակագրող յանձնաժողովի նախագահ եւ մէկ առ մէկ գրի էր առնում եղեռնից մազապուրծ իր հայրենակիցների նիւթական եւ հոգեւոր կորուստները, որպէսզի իր պետութիւնը կարողանայ հիմնաւորուած փաստերով պահանջատէր լինել: Եւ ուզում էր հաւատալ, որ հայ իշխանութիւնները ապրում են «անցողական դրութիւն», այդ պատճառով էլ «կարող են կոշտութիւններ պատահել, բայց կարգի կը գան, եւ ամէն բան շատ լաւ կը լինի»:

Ինչ խօսք, Թումանեանը ուզում էր իշխանաւորներին էլ տեղ հասցնել «Սարն ամէնքին է հաւասար»՝ չարիվերջեան փիլիսոփայութիւնը: Որքան արդիական են Թումանեանի մտքերը ժողովրդի տարբեր հատուածների փոխադարձ ընբռնման անհրաժեշտութեան մասին.

«Ինչ ասել կ'ուզի, որ փոքրամասնութեան երջանկութիւնը չի կարող հաստատուն լինել մեծամասնութեան թշուառութեան վրայ»: Նիւթապաշտութեան, աթոռակովի, իշխանատենչութեան այս հակասական օրերում որքան արդիական են հնչում Թումանեանի խօսքերը.

Հէ՛յ, ազահ մարդ, հէ՛յ, անգոհ մարդ, միտքդ երկար, կեանքդ՝ կարճ...

Քանի քանիսն անցան քեզ պէս քեզինց առաջ, քո առաջ:

Ինչ են տարել նրանք կեանքից, թէ ինչ տանես դու քեզ հետ:

Խաղաղ անցիր, ուրախ անցիր երկու օրուան էս ճամբէն...

Նոյնիսկ մանկական գործերում («Հսկան», «Չարի վերջը», «Թագաւորն ու չարչին», «Քաջ Նազար») կարելի է կարդալ Թումանեանի քաղաքական հայեացքները, որտեղ նա ցոյց է տալիս ժողովրդի անունից խօսող մարդկանց հակաժողովրդական խօսքերը: Աղուէսի այլաբանական կերպարով նա զգուշացնում է անսահմանափակ իշխանութեան կործանիչ հետեւանքների մասին: Նրա համոզմամբ առհասարակ կառավար-

րութիւնները արժանի չեն իրենց ժողովուրդներին եւ սուտ է, թէ ժողովուրդները արժանի են իրենց կառավարութիւններին: Հասարակական գոտութիւնների պատճառը Թումանեանը տեսնում է ոչ թէ ժողովրդի, այլ ամբոխի մէջ: Իր «մօտիկ հարեանը ու հեռու բարեկամը» հանճարեղ յղուածում Թումանեանը տուել է ամբոխի եւ ժողովրդի դասական սահմանումը. «Ժողովուրդն իմաստուն է, ամբոխը չիմար: Ժողովուրդը ծանր է, ամբոխը՝ թեթեւ, ժողովուրդը մեծահոգի ու բարի է, ամբոխը՝ դիւրագրգիւ, վտանգաւոր, չար, ժողովուրդը խաղաղասէր է, ամբոխը՝ կոռուարար»:

Թումանեան-մարդու հրաշքը անսպառ է: Նա իր հայրենիքի գինուտըն էր, նաեւ այն հայրապետը, որը հոգեհանգիստ կարդաց իր ողջ ազգին, բայց չդարձաւ ողբասաց, ոչ թէ պարզապէս տեսաւ, այլ կազմակերպեց հազարաւոր օրերի ու ծերերի թաղումներ, զբաղուեց կենդանի մնացած որբերի խնամքով, տեսաւ նրանց լացն ու արտասուքը, բայց վրէժի չէր չէր, չէր չէր անտեղութեան գերին, նա տէրն էր իր հայրենիքի եւ նահապետն էր իր ժողովրդի, քանզի.

Հոգիս՝ տանը հաստատուել - Տիեզերքն է ողջ պատել, Տիեզերքի տէրն եմ ես, Ո՞վ է արդեօք նկատել:

Թումանեանն է մեր ազգայինը, մեր անզուգականն ու անկրկնելին, որն այնքան բարձր է, որ նոյնիսկ հետեւորդներ չունեցաւ, մնաց միակն ու եզակին, որովհետեւ այդպիսի կատարելութիւնը իր հետեւորդների միջոցով էլ աւելի կատարեալ դառնալու խնդիր չունի: Նա չէր կարող չլինել, ինչպէս չէր կարող չլինել բնութիւնն ինքը՝ իր տիեզերական մեծ խորհրդով եւ բազում առեղծոսածներով:

Քանի դարերը առաջանան, Թումանեանի լոյսը ոչ միայն չի խամբելու, այլեւ ուժեղանալու է, եւ նա միայնակ է կանգնելու եկող սերունդների հիացական հայեացքի ներքոյ իբրեւ մեր նոր եւ ողջ քերթութեան անհաս Արարատ: Թումանեանը միշտ մնալու է անարատ մարդու, անվերջ դէպի տիեզերականը, մաքուրն ու բարին, կատարելութիւնը ձգտող մարդու լաւ տեսակի չափանիշը:

Ինքը՝ Թումանեանը ինչ-որ առիթով խոստովանել է. «Աշխարհքում ամէն բան հեշտ է, մի բան է դժուար՝ մարդ լինել»: Եւ Թումանեանը հեշտութեամբ արեց ամէնից դժուարը՝ ամէնքի հետ ապրեց ու ամէնքի հետ տառապեց, նուիրուեց անմնացորդ, այլուրեց ու այլուրեց լոյս տուեց, բայց մնաց քայքայելի ու եզակի, որովհետեւ ունէր մարդ լինելու բարձրագոյն կոչումը:

Տիեզերքում աստուածային մի ճամբորդ է իմ հոգին,

Երկրից անցուոր, երկրի փառքին անհաղորդ է իմ հոգին,

Հեռացել է ու վերացել մինչեւ աստղերը հեռաւոր,

Վար մնացած մարդու համար արդէն խորթ է իմ հոգին:

Դէպի անմահութիւն իր ճանապարհին նա ձուլուեց իր սիրած բնութեանն ու տիեզերքին եւ այսօր էլ այնտեղից ու նաեւ յաւերժ կենդանի իր ստեղծագործութիւններից է սփռում լոյսը հայ ժողովրդի ճանապարհին եւ նրա փորձութեան պահանջին միշտ օգնում է իր իմաստութեամբ եւ մարդկայնութեամբ՝ դառնալով կատարելութեան չափանիշ՝ անհաս ու պաշտելի:

ԳԱՂՈՒԹԱՅԻՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՆՈՐԱՆՇԱՆԱԿ ԱԿԱԳ ՀԻՒՊԱՏՈՍԻ ՄԱՍԼՈՅ ԱՍՈՒԼԻՍԸ

Լոս Անճելոսի մօտ Հայաստանի աւագ հիւպատոս՝ Տիար Գրիգոր Յովհաննիսեան, անցեալ Հինգշաբթի մամուլի ասուլիս մը սարքեց, որուն ներկայ էին քաղաքիս հայ մամուլի գրեթէ բոլոր ներկայացուցիչները: Հիւպատոսարանին մէջ կայացած սոյն ասուլիսին գլխաւոր նպատակն էր ծանօթանալ տեղւոյս հայ մամուլին: Խօսակցութեան նիւթ դարձան համայնքային, տեղական եւ քաղաքական գանազան հարցեր: Անդրադառնալով հայ եւ վրաց փոխարարներու թիւններուն եւ լուծելի առկա հարցերուն՝ Գ. Յովհաննիսեանն ըսաւ թէ այդ մասին կարիք չկայ մեծ աղմուկ բարձրացնելու: Այդ բոլորը ընթացիկ կարգով եւ

տարբեր մակարդակներով, կրնան իրենց բարւօք լուծումը գտնել: Ասուլիսէն ի յայտ եկաւ որ Հայաստանի հիւպատոսարանը՝ Լոս Անճելոսի ոչ հայաշատ շրջանէն պիտի փոխադրուի Կլենտէյլ: Այդ առնչութեամբ արդէն գործնական քայլեր առնուելու վրայ են: Այսպիսով հիւպատոսարանն աւելի մօտ կ'ըլլայ հայ համայնքին: Վերջապէս, Ամենայն Հայոց Հայրապետը քաղաքական կազմակերպութիւններու, ազգային, կրթական, կրօնական եւ տեղատուական կառույցներուն իր անձին հանդէպ ցոյց տրուած ջերմ ընդունելութեան համար:

ԼԵՒՈՆ ԶԱԼԵՆ ՍԻՐՍԵԼԵԱՆԻ «ԱՐՁԱԿԻ ԱՐՈՒԵՍ. ԶԱՓ ԵՒ ԽԵՆԹՈՒԹԻՒՆ» ԳՐՔԻ ՇՆՈՐՀԱՆԴԵՍ

Հ.Բ.Ը.Մ.ի Հայաստանի Ներկայացուցչութեան եւ Հայաստանի Գիտութիւններու Ազգային Ակադեմիայի Մ. Աբեղեանի անուան գրականութեան ինստիտուտի կազմակերպութեամբ Երեքշաբթի, Փետրուար 17ին, Հայաստանի Ամերիկեան համալսարանի գործարար կեդրոնի սրահին մէջ տեղի ունեցաւ պիւբլիքային տաղանդաւոր արձակագիր եւ բանաստեղծ Լեւոն Զաւէն Սիւրմէլեանի «Արձակի արուեստ. Զափ եւ խենթութիւն» գրքի շնորհանդէսը: Հ.Բ.Ը.Մ.ի Լեւոն Զաւէն Սիւրմէլեան Հիմնադրամի յատկացումով եւ Մ. Աբեղեանի անուան գրականութեան ինստիտուտի «Գրականագիտութիւն XX դար» մատենաշարով լոյս տեսած Սիւրմէլեանի գիրքը անգլերէնէ հայերէն թարգմանած էր Արամ Արսէնեանը: Սիւրմէլեանի գրքի շնորհանդէսը վարող Յովիկ Էօրտեքեան խօսք տուաւ Հ.Բ.Ը.Մ.ի Հայաստանի Ներկայացուցչութեան անօրէն Աշոտ Ղազարեանին, որ խօսեցաւ միութեան հրատարակչական գործունէութեան, մանաւանդ օտարագիր հայ գրողներու գիրքերու հրատարակութեան մասին: Ապա ելոյթ ունեցաւ Սիւրմէլեանի գրքի հրատարակութեան նախաձեռնող եւ գրքի խմբագիր գրականագէտ Ազատ Եղիազարեանը, որ շեշտեց «Գրականագիտութիւն XX դար» մատենաշարին կարեւորութիւնը, որուն շարքով լոյս տեսած էր նաեւ Սիւրմէլեանի գործը: Կոմիտասեան մեներգերով հանդէս եկաւ Քնարիկ Աբրահամեանը:

Լեւոն Զաւէն Սիւրմէլեանի գիրքը ներկայացուց գրականագէտ, «Սփիւռք» գիտաուսումնական կեդրոնի տնօրէն Սուրէն Գանիշեանը: Ան յայտնեց թէ Սիւրմէլեանի այս գործը հրաշալի դասագիրք մը կրնայ ըլլալ նաեւ երիտասարդ գրողներուն եւ գրականագէտներուն համար: Իր խօսքը ըսաւ նաեւ թարգմանիչ Արամ Արսէնեանը: Լեւոն Զաւէն Սիւրմէլեանի մասին խօսեցաւ գեղանկարիչ Յակոբ Յակոբեանը: Ան յուզումով ներկաներուն պատմեց Մելգոնեան վարժարանին մէջ ուսած տարիներուն Սիւրմէլեանի «Լոյս Զուարթ» ընթերցանութենէն ստացած անջնջելի տպաւորութեան մասին: Սիւրմէլեանի քրոջ որդին՝ Սարգիս Սարգիսեանը հպարտութեամբ ըսաւ որ Սիւրմէլեանի «Արձակի արուեստ. Զափ եւ խենթութիւն»ը իբրեւ դասագիրք կը գործածուի Միացեալ Նահանգներու մէջ: Սարգիսեան աւելցուց, որ իր մօտ կը գտնուի նաեւ վահան թէքեանի եւ Սիւրմէլեանի նամակները: Եզրափակիչ խօսքով ելոյթ ունեցաւ Հայաստանի Գրողներու միութեան նախագահ Լեւոն Անանեանը, որ բարձր գնահատեց բնագրային թարգմանութեան որակը: Շնորհանդէսին ներկայ գտնուեցան գրողներու, գրականագէտներու, գրաքննադատներու եւ մտաւորականներու ընտրանի մը, ինչպէս նաեւ հայագիտութեան ճիւղին հետեւող ուսանողներ: Շնորհանդէսի աւարտին ներկաներ հրաւիրուեցան հիւրասիրութեան:

ՆԵՐՍԵՍ ԱՐՔ. ՊՈԶԱՊԱԼԵԱՆԻ ԱՌՈՂՋԱԿԱՆ ՎԻՃԱԿԸ ՄՏԱՅՈՒԳԻՉ

Մայր Աթոռ Ս. Էջմիածնի միաբաններէն Գերշ. Ներսէս Արք. Պոզապալեան, շուրջ երկու շաբաթ առաջ, Ս. Էջմիածնի իր բնակարանին մէջ անարգ յարձակումի ենթարկուած էր: Արդարեւ, կողոպտուի նպատակով կատարուած այս ոճրային արարքին հետեւանքով՝ Սրբազանը մարմնական ծանր վնասներու ենթարկուելով փոխադրուած է հիւանդանոց: Այս առնչութեամբ կատարուած է ձեռքարկութիւն մը: Վերջապէս, Ամենայն Հայոց Հայրապետը այցելած է հիւանդանոց, ընկերակցութեամբ Պրազիլիոյ առաջնորդ Գերշ. Տ. Տաթև Արք. Ղարիպեանի, Պոլսոյ Հայոց Պատրիարքարանի Կրօնական Ժողովի ատենապետ՝ Գերշ. Տ. Արամ Արք. Աթէշեանի, Վենետիկի Միթարեաններու աբբահայր Եղիա Քիլարպեանի: Ստացուած տեղեկութեանց համաձայն Պոզապալեան Սրբազանի վիճակը մտահոգիչ է եւ բժիշկները միշտ քունի մէջ կը պահեն զինք, աւելի բարդ վիճակներ կանխելու համար: Արդարեւ, բժիշկները կ'ըսեն թէ բաւական մտահոգ է

Սրբազանի առողջական վիճակը: Սրբազանը լուրջ վնասներ ստացած է գանկէն եւ ողնայարէն ու զգայազուկ վիճակի մէջ կը գտնուի: Այս կապակցութեամբ Փետրուարի 23ին Լոս Անճելոսաբնակ պէյլանցիները եւ Պէյլանի Հայրենակցական Միութիւնը հայ մամուլին յղած են «Խօսք Դատապարտուած» եւ խստորէն կը դատապարտեն անմարդկային ոճրարքին հեղինակները, միաժամանակ պահանջելով անոնց բացառուելու եւ ամենախիստ պատիժներու ենթարկուելու: «Յաւալի է նշել թէ կաթողիկոսական ընտրութենէն ետք, Պոզապալեան շինարար Սրբազանը մեկուսացուած կեանք մը կ'ապրէր, չի շնչեցնելով Իգմիրլեան Կաթողիկոսի օրով Կոմիտաս վարդապետի դէմ դրսեւորուած հալածանքը»: Արդարեւ, Պէյլանցիներու Միութիւնը Հայաստանի պետական եւ կրօնական պատկան իշխանութիւններէն կը պահանջէ որ անհրաժեշտ միջոցներ ձեռք առնեն, որպէս զի անյապաղ լոյս բերուին սոյն ոճրային արարքի մանրամասնութիւններն ու ներքին ծալքերը:



ՇՆՈՐՀԱՆԴԵՍ Արձակագիր ԹՈՐԳՈՄ ՓՕՍԹԱՃԵԱՆԻ

Նոր Լոյս Ընծայած Զորս Գրական Աշխատասիրութեանց Նախագահութեամբ՝ **Գերշ. Տ. Յովնան Ս. Արք. Տէրտէրեանի Բարեխնամ Առաջնորդ Հայց. Առաք. Եկեղեցւոյ Արեւմտեան Թեմի** Կազմակերպութեամբ՝ **ԱՄԵՐԻԿԱՅԻ ՀԱՅ ԳՐՈՂՆԵՐՈՒ ՄԻՈՒԹԵԱՆ** Մասնակցութեամբ՝ - Հայկական Բարեգործական Ընդհանուր Միութեան - Թէքեան Մշակութային Միութեան - Նոր Սերունդ Մշակութային Միութեան

Տեղի պիտի ունենան համառօտ գեկուցումներ՝ Փրոֆ. Օշին Քէշիշեանի, Վաչէ Սեմերեանի, Յարութ Տէր Դաւիթեանի, Լիլիթ Քէհեանի եւ Տօֆ. Սարգիս Մեսրոպեանի կողմէ

Հանդիսավար՝ Բարսեղ Գարթալեան Գեղարուեստական Յայտագիր Կիրակի, Մարտ 22, 2009 կ.ե. Ժամը 5ին Հ.Բ.Ը. Միութեան «Պոյանեան» սրահին մէջ 2495 East Mountain St., Pasadena Մուտքը ազատ Հիւրասիրութիւն յաւարտ շնորհանդէսի

ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ
ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ԿՏՐՕՆ

Yes, I wish to subscribe to Massis Weekly
Enclosed a check for (one year)
* \$50,00 for USA
* \$60,00 (second class), \$ 75,00 (Air Mail) for Canada.
* \$85,00 (second class), \$ 125,00 (Air Mail) Overseas.

Name: -----
Address: -----
City: ----- State:----- Zip Code:-----
Country: -----
Tel :----- Fax : -----

ՓԱՂՈՒԹՆԵՐ

ՆՈՅ ՆԱՐԱՊԵՏԻ ՎԵՐԱԴԱՐՁ

Շարունակում է 7-էն

խոնուած են ուղեղիս մէջ: Քեզի ընելիք հարցումներս հիմա գիրար կը հրմշտկեն եւ ամէն մէկը միւսներէն առաջ պատասխանի կը սպասէ: Նախ, ինձ համար խորին խորհուրդ է թէ դուն ինչպէ՞ս ողջ մնացած ես մինչեւ այսօր, որո՞նք էին քու մահէդ ետք քեզ վերակառուցողներն ու վերակենդանացնողները: Ո՞ր կաթնածիրի ո՞ր աստղի ո՞ր մոլորակէն էին անոնք: Ուրկէ՞ կու գաս դուն: Երկիր մոլորակի այսօրուայ հիմնախնդիրը քննարկելու համար ինչպէ՞ս կ'ըլլայ որ մէկ կողմ ձգած ես մեծագոյն պետութիւնները եւ եկած հոս Հայաստան: Ի՞նչ բանի կը պարտիմ քու այս այցելութեան գերազանց բացառիկ պատիւն ու վստահութիւնը - ես որ համեստ գիտաշխատող մըն եմ, աշխարհի անտեսուած, անարգուած եւ անիրաւուած փոքրագոյն երկիրներէն մէկուն աննշան քաղաքացին: Յետոյ, ո՞վ է Տիեզերապետը - կենդանի էա՞նք մըն է որ կը սնանի, կը շնչէ ու կ'ապրի մեզ նման, թէ՞ այն Աստուածն է որ սկիզբ կամ վերջ չունի, որո՞ւ մասին հագուագիւտ հասկցող մարդիկ եւ անհամար չհասկցողներ խօսած են ու կը խօսին մինչեւ այսօր: Դեռ, սկիզբ ու վերջ չունեցող անասման Տիեզերքին մէջ, ուր աստղերու թիւը մեր մոլորակի մօտ մէկ միլիոն քիլոմետր ջրափերը ծածկող աւազի հատիկներու թիւէն շատ ու շատ աւելի է, չեմ կրնար երեւակայել թէ Տիեզերապետը ինչո՞ւ եւ ինչպէ՞ս պիտի ուզէր հետեւիլ անոնց շուրջ թաւալող անթիւ մոլորակներու կեանքին՝ մէկիկ-մէկիկ: Հետեւաբար, չեմ կրնար պատկերացնել թէ տիեզերական աստիճանաչափով ի՞նչ կարեւորութիւն կը ներկայացնէ հիւլէն իսկ աննշան մեր այս Երկիր մոլորակը, որո՞ւ փրկութեան մասնաւոր առաքելութեամբ ազնուօրէն ուղարկուած ես հոս: Ուրիշ շատ հարցումներ հիմա կը բախին ուղեղիս պատերուն, բայց այսքանը՝ սկսելու համար:

Երկար մտածեց Նոյ նահապետ: Երկար նայեցաւ Նորայրին ու գորովալից ժպտեցաւ: Հասկացողութեամբ ու հանդուրժողութեամբ թրթռուն ժպիտին արանքէն մեղմ պատասխանեց.

- Մշակուած ու զարգացած միջին մարդու իմացական հասողութենէն շատ աւելի խոր ըմբռնում կը նշմարեմ քու ոչ միայն ըրած հարցումներուդ մէջ, այլ մանաւանդ ինձի հեռահաղորդած հարց-առաջադրանքներուդ մէջ որոնք մտածողական գործընթացէդ դուրս ձեւակերպում կ'որոնեն այս պահուն: Բարձրորակ իմացականութեան մը վկայութիւնն են արտասանուած ու չարտասանուած բոլոր հարցումներդ: Անոնց բոլորին պատասխաններն ալ շատ պարզ են ինձի: Եւ պատրաստ՝ լեզուիս ծայրը: Միակ անպատեհութիւնը, սակայն, մարդ էակին - հետեւաբար նաեւ քու - անպատրաստ ըլլալն է: Ի՞նչ օգուտ կրնան բերել իմ տալիք պատասխաններս հիմա, երբ դուն եւ ամբողջ մարդկութիւնը թիւրըմբռնէք ըսածներս, դուք ձեզ համոզէք թէ ըմբռնած էք զանոնք, ծանծաղ մեկնաբանութիւններով ու խախտու հիմերով կրօնքներ ու փիլիսոփայութիւններ հրապարակ իջեցնէք անոնց օգտագործմամբ, ու բիւզանդական ամուլ

վէճերով եւ իմաստակութիւններով փակէք ձեր միտքերու դռներն ու պատուհանները: Ձեմ ուզեք շփոթի կամ մղձաւանջի մէջ ձեզ, քանի դեռ կանուխ է: Ծիշդ այնպէս, օրինակի համար, ինչպէս որ երեք տարու մասուկը չի կրնար ըմբռնել ձեր մեծատաղանդ Այնշթայնի Յարաբերականութեան Ընդհանուր Տեսութիւնը: Ատիկա կարենալու համար իրեն անհրաժեշտ է, նախ՝ մեծնալ մարմնով ու միտքով, ապա՝ իւրացնել գիտութեան բազմատեսակ ընդհանուր գիտելիքները, եւ ի վերջոյ՝ ուսումնասիրել յառաջացեալ մասթեմատիկայի եւ աշխարհաչափութեան տեսական օրինաչափութիւններուն գործնական կիրարկումները, ինչպէս նաեւ բնագիտութեան, աստղաբանագիտութեան ու յարակից շարք մը գիտութիւններու նորագոյն հարուստ տուեալները: Ես վստահ եմ թէ դուն շուտով կ'ամբողջացնես այս իրագործումները եւ պատրաստ կ'ըլլաս քու խելամիտ հարցումներուդ տալիք պատասխաններու...:

Նորայր գլխու բազմիմաստ շարժումով հասկացողութեան ու հաւանութեան նշան ըրաւ, որմէ ետք երկարամօրուսը անայլայլ շարունակեց՝ Տիեզերապետին ներկայացնելիք իր գեկոյցի գլխաւոր թէզերուն թուումը.

- Չորրորդ՝ անգամ մը որ անհրաժեշտ որոշումը հաղորդէ, Տիեզերապետը ինձի պարտականութիւն յանձնած է՝ պատգամել վերապրելու կոչուած կենդանատեսակներուն - ներառեալ մարդատեսակներուն - որ պատրաստուին՝ իմ կողմէ արդէն նախագծուած ու շուտով կառուցուելիք նոր տապալանին մէջ պատասպարութեան իրենց որդիներով, անոնց ընտանիքներով, թողնելով ու ծոռներով: Ես Երկիր պիտի վերադառնամ անհրաժեշտութեան պարագային եւ անհրաժեշտ պահուն՝ վերահսկելու համար փրկարար առաքելութեան գործողութիւնները: Անկէ ետք - եթէ մինչ այդ երկրաբանակիչները 180 աստիճանի ետ-դարձ կատարած չըլլան իրենց գահավէժ ընթացքէն - ահեղ ու կործանարար նոր ջրհեղեղ մը պիտի ողողէ ամբողջ Երկրագունդի ծովեզերեայ շրջանները, ապա՝ ցամաքամասերու յարաբերաբար ցած տարածքները: Ասիկա ուղղակի հետեւանքը պիտի ըլլայ աշխարհի կարճատես տիրակալներու, ազահ հարստապետերու եւ անկուշտ հարստահարիչներու լիամարտութեան, տգիտութեան, անգթութեան եւ անձնապաշտութեան: Այդ օրերուն, Երկիր երկու բեւեռներու ցամաքներն ու ովկիանոսները ծածկող լեռնակուտակ անասման սառցակոյտերը պիտի հալին ու հեղեղեն Երկրի հողերուն ընդարձակ տարածքները՝ ջրամոյն ընելով մարդերն ու այլ կենդանիները: Հեղեղները պիտի ծածկեն նաեւ արարատեան դաշտավայրի բոլոր այն տարածաշրջանները որոնք ատեն մը արեան ծովերու վերածուած էին՝ որպէս հետեւանք անհեռատեսութեան, խաւարամոլութեան, մոլեռօանդութեան, վաչրագութեան, իրար հետ համերաշխօրէն գոյակցելու չկամութեան եւ անհանդուրժողութեան: Հեղեղները պիտի ծածկեն նաեւ բոլոր այն անվերջ եւ ապարդիւն վէճերն ու ոճիրները որոնք երկու դարեր իրարու դէմ հանած են երբեք զրախտավայրի ու մերձակայ երկիրներու ժողովուրդները՝ կեղծ եւ

անբան ղեկավարներու կողմէ բիրտ շահագործման հաշուոյն: Թէ ո՞վ ի՞նչ ոճիրներ գործած է որո՞ւն դէմ՝ ա՛լ հաշուետու եւ հաշուառու պիտի չունենայ, քանզի բոլորն ալ աշխարհեղեղի հզօր ջուրերուն տակ պիտի թաղուին ու կորչին առյաւէտ:

- Հինգերորդ ու վերջին՝ երբ ժամանկը գայ, ես պիտի վերադառնամ տիեզերանաւ-տապանով: Մեծ Ջրհեղեղին օգտագործուած նաւ-տապանը այս անգամ օգուտ պիտի չունենար, քանի ատիկա մարդ էակը պիտի չկարենար պաշտպանել այն ամբողջական ապակառութենէն որ անբնակելի պիտի դարձնէ Երկիր մոլորակի հողը, ջուրն ու օդը՝ մինչեւ մթնոլորտի ամենավերին խաւերը: Ապակառութեան մաս կը կազմեն հողագունդին գերջուրամը՝ բնածախային երկթթուակի(8) եւ այլ կազերու պատճառով, ապրող բոլոր էակներու ֆիզիքական քայքայումը՝ հիւլէական շողարձակումի հետեւանքով, համատարած թունաւորումը՝ քիմիական ամենէն վտանգաւոր բաղադրութիւններու առօրեայ մեծաքանակ սպառումով, եւ կապակցաբանական(9) հաւասարակշռութեան խախտումը՝ բուսական ու կենդանական կեանքի բոլոր բնագաւառներու մէջ: Ադէտը, իր վերջին տեսքով, կրնայ գալ բեւեռային տարածքներու սառցահալէն կամ անջրպետէն հասնելիք մոլոր-

րակերպերէն: Նման պայմաններու տակ ֆիզիքական փրկութեան միակ յուսատու միջոցն է տիեզերանաւ-տապանը: Ներկայիս նախագծուող ու շուտով կառուցուելիք այս տիեզերատապանն է որ երկրային կենսամոյջները պիտի փոխադրէ հեռաւոր այլ աստղի մը այն մոլորակը որ Երկրի մօտիկ կենսապայմաններով օժտուած է: Նորակառուց տիեզերատապանին մէջ պիտի ընդունուին գոյգ-գոյգ իւրաքանչիւր գլխաւոր մարդատեսակէ եւ կենդանատեսակէ: Մարդատեսակներու կարգին պիտի դասուին արհեստի, արուեստի, ասպարէզի, գիտութիւններու եւ զանազան այլ գբաղումներու ներկայացուցիչները - որոշ բացառութիւններով: Այսպէս, տիեզերատապանէն ներս մուտքը արգիւտած պիտի ըլլայ բոլոր քաղաքագէտներուն, փաստաբաններուն, կղերապետներուն, ամէն տեսակի միջնորդներուն, դրամաշորթներուն, ու մարդոց քրտինքով, արցունքով եւ արիւնով հարստութիւն դիզող բազմատեսակ վաշխառուներուն ու մակաբոյծներուն՝ պաշտօնական ինչպիսի անուն ու տիտղոս ալ ունենան անոնք անարժանօրէն: Ծատ բացառիկ պարագաներու թոյլտուութեան համար անհրաժեշտ պիտի ըլլայ նոյնինքն Տիեզերապետին վաւերացումը:

(Շարունակելի 2)

1. Աստղակերպ - Asteroid (սխալ յորջորջում որ դեռ կը գործածուի):
2. Մոլորակերպ - Planetoid - Asteroid - Աստղակերպ: Կը կարծուի թէ արեգակնային համակարգի տարբեր տարածքներ ուրոյն ուղեծիվորով ըմբացող մոլորակերպերը, թիւով մօտ մէկ միլիոն, չափով մինչեւ 1,000 Բմ. հիմ մոլորակի խիսակնեմ են:
3. Բորակական թթու - Nitric acid
4. Բորակաման թթու - Nitrous acid
5. Թթուային անձրև - Acid rain
6. Այրող ու մաշեցնող - Corrosive
7. Խելամիտ Մարդատեսակ - Homo Sapiens
8. Բնածխային երկթթուակ - Carbon dioxide
9. Կապակցաբանութիւն - Ecology

ՄՍՏՈՒՑԾ ԳՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ
ՃԱԿԱՏԱԳՐԻ ԲԱՌՈՒՂԻՆԵՐՈՒՄ
 ՄԱՐՏԻՐՈՍ ՎԱՐԴԱՆԵԱՆ
 Վ.Է.Պ.5 ԼՈՍ ԱՆՃԵԼՃԵՍ_2008

Երեւանէն մինչեւ Լոս Անճելես ծանօթ անուն է գրող, հրապարակագիր մասնագիտութեամբ ճարտարագէտ եւ դասախօս Մարտիրոս Վարդանեան, որ 1978-ին կ'արտագաղթէ ԱՄՆ: Ան իր հրատարակած գիրքերու ցանկին վրայ ունի «Գիրք Արեան եւ Մաքառման», (1990), «Խորտակուած Երազների Արահետներով», (1992), «Մենամարտ Մահադաւ Լուրթեամ մէջ», 1996, «Այդպէս էլ Գարուն Չեկաւ», (2002), «Յանցագործ Աշխարհ», (2005) ստեղծագործական լուրջ վաստակ մը, որուն վրայ կու գայ աւելնալ «Ճակատագրի Քառուղիներում» ներկայ վէպը:

ColorDepot, Լոս Անճելոս տպուած եւ 2008-ին լոյս ընծայուած ներկայ գործին շապիկը եւ գեղարուեստական ձեւաւորումը կատարած է Սահակ Էքշիեան: «Ճակատագրի Քառուղիներում» ներկայ 387 էջերու վրայ տարածուած մաքուր ու խնամուած տպագրութեամբ վէպը իր ընդհանրութեան մէջ կ'արտացոլացնէ մեր ներկայ ժամանակներու գեխ, անբարոյ, ցնցիկ կեանքը, որ գոհարդէն կը սպառնայ մշակութային, ընկերային, ազգային, քաղաքական եւ հոգեւոր կառուցման բարոյական արժէքներուն:

Մարտիրոս Վարդանեանի շօշափած նիւթերը Արցախ աշխարհ-



հէն Հայաստան եւ մինչեւ Ամերիկա, մեր ժողովուրդի եւ ներկայ դարուս մարդկութեան ապրած ամէնօրեայ տագնապներն են: Իսկ վէպի դիւտաւոր հերոս, Վիրաբոյժ Վրէժ Թառեանի անձին շուրջ գնուող բոլոր տիպարները, նոյնպէս մեր ապրած առօրեայ կեանքի ողորմելի դերակատարներն են, որոնք առիթ կ'ընծայեն ընթերցողին խորհրդածելու:

ԵՐԲ ՕԴՆ ՈՒ ԿԱԶԵՐԸ ԿԸ ԵՆՇԵՆ ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԱՐԱՆՆԵՐՈՒ ՎՐԱՅ...

Ո՞վ է տառապած երբեք օդի կամ կազերու կուտակումն մարմնին մէջ: Շատերու համար կատարեալ մարտիրոսութիւն մըն է յանկարծ ուռած գգալ ինքզինքը, դժուարութեամբ շնչել, ստիպուած ըլլալ քակելու կոճակ ու գոտի, կարծես թէ բոլոր ներքին գործարանները ճնշումի տակ ըլլալին: Եւ այս բոլորը ըստ երեւոյթին չնչին բանի մը համար: Այսինքն օդը եւ կազերը կ'ընդլայնեն մարտողական խողովակը: Բնական վիճակի մէջ ալ գոյութիւն ունին հոն անոնք. բայց երբ վերոյիշեալ անհանգստութիւնները երեւան դան, կամ այն է որ շատ մեծ քանակութեամբ են եւ կամ պէտք եղած չափով չեն արտաքուստ:

Նախ քննենք օդի պարագան: Մարդիկ միշտ որոշ քանակութեամբ օդ կը կլեն, ուտելու, խմելու կամ շնչելու ատեն: Բայց բուն օդակերութիւնը (աչրօֆաթի) կը սկսի երբ չափէն աւելի կը կլեն: Չորային մարդիկ, ծխամոլներ, որկրամուկներ, անոնք որոնք արագ կ'ուտեն, շատ տաք կ'ուտեն, յաճախ ենթակայ են անոր: Շատերը օդ կլենու հիւանդագին սովորութիւն ունին:

Այս օդը կը հաւաքուի ստամբոսին մէջ աւելի քան աղիքներուն եւ կը ճնշէ:

Իսկ կազերը կը գոյանան գանազան խմորումներէ (ֆլեյմանթիանոն): Երբ ուտելիքները երկար ատեն մնան ստամբոսին մէջ, երբ ստամբոսի փեփսիսը անբաւական է: Մասնաւորաբար կարգ մը ուտեստները՝ լուբիան, կաթը, հացի միջոցը, գինին մարտողութեան ատեն կազ կ'արտադրեն: Կազերու մեծ մասը սակայն կը գոյանայ հաստ աղիքին մէջ: Ստամբոսէն աւելի երկար ատեն կը մնան ուտելիքները այնտեղ: Գրեթէ միշտ, աղիքային կազերու առատութիւնը արդիւնք է մաղձի պակասին: Մաղձը կը դանդաղեցնէ գործունէութիւնը մանրէներուն, որոնք պատճառ կ'ըլլան խմորումներուն: Ասոր համար է որ յաճախ աղիքի «պալոնըմանները» (փքուռոց վիճակ) նշան են լեարդի տկարութեան:

Սովորաբար, ըլլայ խմորումներ, ըլլայ օդակերութենէ առաջ եկած կազերը մասամբ կ'արտաքուստին աղիքներու, ստոծանիի եւ որովայնի մկաններու կծկումներով, աղիքին ներքերեսն ալ կը թափանցեն մաս մը կազեր, դռներակը կ'առնէ կը տանի զանոնք թոքերուն, ուրկէ կ'արտաքուստին: Պատճառ մը կրնայ արգիլել այս գործողութիւնը, այն ալ լեարդին արիւնախոնուսն է, որ կը փակէ ճամբան, թոյլ չի տար որ կազերը շրջան ընեն դռներակի միջոցաւ եւ կը ստիպէ որ անոնք մնան աղիքին մէջ...

Ասոր համար է որ «պալոնըմաններ» կը տեսնուին բոլոր անոնց մօտ, որոնք լեարդի արիւնախոնուսն ունին, ինչ որ ալ ըլլայ անոր պատճառը դժուարամարտութիւն (չատակերներու մօտ), բորբոքում (ջորացաւ, ժանտաւտնդ, թոքատապ),

թունաւորում (ալքոլամորներ), սիրտի տկարութիւն եւայլն: Միւս կողմէ, երբ աղիքը «ծոյլ է» եւ տկար են իր կծկումները, կազերը շրջան չեն ընէր դէպի իրենց ելքի բնական ճամբաները: Վերջապէս, երբ որովայնին մկանները տկար են, մարտողական խողովակը կորանցուցած է իր առաձգականութիւնը եւ ուժը, կազերը ազատ գետին կը գտնեն, կ'ընդլայնեն աղիք ու ստամբոս, փոխանակ ներմղուելու եւ արտաքուստելու:

Կազերը շատ անգամ խիթեր եւ գանազան անհագստութիւններ կը պատճառեն: Երբեմն երբ կազերը կը ճնշեն գանազան գործարաններու վրայ ենթական այնպէս կը զգայ թէ կրակ կը թափեն վրան կամ ականջները կը խժան: Ամենէն վտանգաւորն է երբ կը ճնշեն սիրտին, լանջախտի կատարեալ պատկերը կը ներկայանայ շատ անգամ ցաւ, դժուարաշնչութիւն, փոքր ճիգ մը ընելու անկարողութիւն: Բատիօսքոփիով կը տեսնեն ստամբոսին մէջ կուտակուած օդը եւ կը ճշդեն արտաճանաչումը:

Չերմութիւնը իր բոլոր ձեւերով օգտակար է ցաւերու պարագային: Մասնաւորաբար լաւ են տաք քօմփրէնները: Կ'օգնեն նաեւ դեղերը որոնք կ'իւրացնեն կազերը (ածուխ, պիսմոթ), պելլատօնը յաճախ քանի մը վայրկեանէն կ'ամօքէ որովհետեւ հակաջրածգային է եւ թոյլ կու տայ որ ստամբոսը բացուի, կազերը բերնէն դուրս ելլեն: Աւելի ծանր պարագաներու, երբ սիրտն ու թոքերը մեծ ճնշումի տակ են, կարելի է դիմել ազդու դեղերու, որոնք անմիջապէս կը պարպեն կազերը եւ կը հանգչեցնեն:

Պարզ օդակերութեան պարագային գոլշացէք շատ տաք կերակուրներէ, ըմպելիներէ: Դնադաղօրէն ճաշեցէք եւ լաւ ծամեցէք: Ճաշի ընթացքին ջուր մի խմէք:

Եթէ օդակերութեան ջրային վիճակ մըն է, օգտակար են պելլատօնի, կարտէնայի եւ վալերիանի նման հանդարտեցուցիչներ, գաղջ լոզանք:

Եթէ խմորումներէ կազ կը գոյանայ սեղանէն վերցուցէք ճարպերը, որսի միսերը, աղանդերները, ընդեղէնը, կաղամբը, հացը, կաթը, սէլիւզով հարուստ ուտելիքներ, կարկանդակները: Կերէք կասկարա եղած միսեր, խաշած բանջարեղէն եւ պտուղ: Դնադաղօրէն եւ լաւ ծամելով կերէք: Ճաշէ ետք տաք բուսաջուր մը խմեցէք, մէջը կիտրոն աւելցնելով:

Եթէ խմորումները շարունակուին, կարգ մը դեղեր անհրաժեշտ կը դառնան, փանքրէաթիինը (որ կօզնէ ալքայիններու մարտողութեան) հակամեխիլները ինչպէս անիստինը, անանուխը, թրնջիտոը (մէլիս) եւայլն: Կամ որոնք կազերը կ'իւրացնեն, ածուխը, պիսմոթը, մանէզին:

Բայց պէտք է ինամել լեարդը, որ շատ անգամ առիթ կու տայ պալոնըմաններու: Ասոր համար լաւ է դիմել բժիշկին:

ՈՂԲԱՑԵԱԼ ՅԱԿՈՒՄ ՏԵՐ ԵՂԻԱՅԵԱՆԻ ՅԻՇԱՏԱԿԻՆ

Ողբացեալ Յակոբ Տէր Եղիայեանի փառաբանական պաշտամունքը տեղի ունեցաւ Ուրբաթ, Փետրուար 13ին, Փաստինայի Հայ Եղբայրութեան Աստուածաշունչի եկեղեցու մէջ հոծ բազմութեան մը ներկայութեան, որոնց մէջ կը գտնուէին հոգեւոր հովիւներ, հաւատակից եղբայր-քոյրեր, պետական դաշնակցային ու նահանգային բարձրաստիճան ներկայացուցիչներ, քաղաքապետներ, ամերիկեան համալսարաններու նախագահներ, համայնքի կազմակերպութիւններու ներկայացուցիչներ, ազգային-հասարակական բործիչներ, գրողներ, գանազան նահանգներէ հարազատներ եւ բարեկամներ: Պաշտամունքին իրենց մասնակցութիւնը բերին համանուն եկեղեցու հովիւ Վեր. Կալվին Սաղրեան (հայերէն պատգամ), հանրածանօթ աւետարնիչ Վեր. Դոկտ. Սամուէլ Տօքթօրեան (օրհնութեան աղօթք), Փաստինայի Հայ Նազովրեցի եկեղեցու հովիւ Վեր. Փօլ Տօքթօրեան (Աստուածաշունչի ընթերցում եւ աղօթք), թոռնիկը եւ Հայ Նազովրեցի եկեղեցու երիտասարդաց հովիւ Վեր. Ճանի Տէր Եղիայեան (անգլերէն պատգամ), եփսան ճարտարապետ Ժիրայր Թիւթիւնճեան (կենսագրական գիծեր), թոռները՝ Ճիմի Տէր Եղիայեան եւ Առնօ Թիւթիւնճեան (վկայութիւններ) անդրանիկ գաւազը՝ Դոկտ. Կարպիս Տէր Եղիայեան (ներբողական, նաեւ ընթերցելով հօրս յիշատակին ձօնուած հոգեւոր յատուկ բանաստեղծութիւն մը հիւանդանոցին մէջ մօրս կողմէ գրուած), խնամին՝ Տիկ. Վարդուկ Աւետիքեան (մեներգ) եւ պրն. Վաչէ Մանկրեան (դաշնակ): Այս առիթով սրտակցութեան յատուկ գիրեր ընթերցուեցան Գերշ. Տ. Եփրեմ Արք. Թապազեանի կողմէ՝ յանուն Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոս՝ Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Վեհափառին, Հոգշ. Հայր Պարթեւ Վրդ. Կիւրիւմեանի յանուն Տ. Մուշեղ Արք. Մարտիրոսեանի, եւ Արթ. Տ. Յովսէփ Ա. Քհնյ. Յակոբեանի, յանուն Հայաստանեայց Եկեղեցու Հիւսիսային Ամերիկայի Արեւմտեան Թեմի առաջնորդ Գերշ. Տ. Յովնան Արք. Տէրտէրեանի: Յատուկ յորդորանք Հիւսիսային Ամերիկայի Հայ Աւետարանական Միութեան հովիւ Վեր. Յովսէփ Մաթոսեանի կողմէ: Ապա Վեր. Կալվին Սաղրեան ընթերցեց Լիբանանէն Հայաստան, Թրաշեան եւ Քիլաղպեան ընտանիքներու կողմէ յղուած սրտակցութեան յօժ ազդեցիկ նամակ մը:

Թաղման արարողութիւնը տեղի ունեցաւ Ալթատինայի Mountain View գերեզմանատան մէջ ձեռամբ Վեր. Կալվին Սաղրեանի: Դազաղին վրայ սրսկուեցաւ ողբացեալին մեծ հօր կողմէ բերուած Խուլազիկի Սբ. Աստուածածին եկեղեցիէն ափ մը հող: Ապա յիշատակի ճաշ մատուցուեցաւ Եղբայրութեան եկեղեցու սրահին մէջ, որուն ընթացքին ցուցադրուեցաւ ողբացեալին կեանքի գանազան հանգրուանները ներկայացնող յիշատակելի նկարներ ու ապա սրտի խօսք արտասանեցին պրն. Միքայէլ Եուսուֆեան, պրն. Աբրահամ Հալպլեան, պրն. Կարապետ Գննապլեան, Վեր. եւ Տիկ. Գրիգոր եւ Նուարդ Մալաքեան, պրն. Գալուստ Մարկանեան, Տօքթ. Յարութիւն Սաղրեան, բանաստեղծուհի Դոկտ. Ալիսիա Կիրակոսեան, Տիկ. Ալիս Դանիէլեան, Տիկ. Փօլին Տէր Եղիայեան, պրն. Սարգիս Շիրիքեան, պրն. Ժիրայր Թիւթիւնճեան, տիկին Նոյեմի Տօքթօրեան եւ պրն. Յովհաննէս Էքմէքճեան եւ տիկ. Անժէլա Տէր Եղիայեան:

ՑԱԽԿՑԱԿԱՆ

ՏԻՐԱՄԱՅԻ ԱՆԺԷԼ ՅՈՎԱԿԻՄԵԱՆԻ մահուան տխուր առթիւ «Քաջ Նազար» պարբերաթերթի խմբագիր՝ Յովհաննէս Պալայեան ցաւակցութիւն կը յայտնէ հանգուցեալի ընտանեկան պարագաներուն, մասնաւորաբար՝ Տէր եւ Տիկ. Ստեփան Յովակիմեանին: Առ այդ \$50 տուար կը նուիրէ «Մասիս»ի ֆոնտին:

ՈՒՇԱԴՐՈՒԹԻՒՆ

Եթէ ձեր տրամադրութեան տակ ունիք հայերէն գիրքեր, եւ կը ցանկանաք զանոնք նուիրել Կայծ Երիտասարդական Միութեան գրադարանին՝ հաճեցէք կապ պահել մեզի հետ: G.Y.O. 1060 N. ALLEN AVE. PASADENA, CA 91104 Norserount@sbcglobal.net

Չեր
Ծանուցումները
Վստահեցէք
«Մասիս»
Շարաքաքերին

T: (626) 797-7680
F: (626) 797-6863
massis2@earthlink.net
www.massisweekly.com

REQUEST FOR PROPOSALS
(RFP #7511)
INDEPENDENT AUDITOR
SERVICES

The Housing Authority of the City of Los Angeles invites proposals from qualified firms interested in providing independent auditor services. Copy of the RFP may be obtained beginning February 16, 2009 on our website at www.hacla.org/ps or call (213) 252-5405 or 252-1832. Proposals will be accepted until 2:00 P.M., by March 17, 2009.

2/26, 3/5/09
CNS-1527112#
MASSIS WEEKLY

ԲԱՑՈՒԱԾ Է

Հիպնոսաբուժութեան կեդրոն
ղեկավարութեամբ՝
Փորձառու բժիշկ Արթին Սաղրեանի
Հասցէ՝ 1060 N. Allen Ave. 2nd floor Unit E
Pasadena CA 91104
Հեռախօս (818) 434-8118 միայն ժամադրութեամբ

ՈՂԻՄՊԻԱԿԱՆ ԱԽՈՅԵԱՆԻ ՄԸ ԱՆՎԱՅԵԼ ԱՐԱՐՔԸ

ԱՔՕ ՊԵԼԵԱՆ

Բրիտանական News of the world թերթի հրատարակած տեղեկությունը եւ նկարը ստեղծեց աղմուկային գայթակղություն մը, որուն ենթակա էր Պէյթինկի ողիմպիական խաղերու արտոյան Մայքըլ Ֆէլիքսը: Նկարին մէջ անուանի մարզիկը կը տեսնուի սրուակէ մը մարիկուանա գործածելու միջոցին:



Եղելու թիւերը գորաւոր ուռմբի մը նման պայթեցաւ եւ արձագանգեց աշխարհի չորս ծագերուն եւ վշտացուց մարզասէր հասարակութիւնը, որ 2008ի ողիմպիական հանդիպումներուն հիացած էր անոր արձանագրած աննախընթաց յաղթանակներով: Ան համաշխարհային նոր մրցանիչ հաստատելով յաջողած էր շահիլ ութը ոսկի մետալներ Ա.Մ. Նահանգներու հաշուոյն:

Ափսոս, ինչ պատահեցաւ որ մէկ վայրկեանի մէջ իսպառակութեցաւ մարզական կեանքի ամենաբարձր մակարդակին մագլցած մարզիկը: Ծատ անվայել կեցուածք մըն էր այս, որ անակնկալի բերաւ աշխարհը: Դասպատարուելի արարքի մը, որ չէր սպասուէր ողիմպիական հերոսի մը:

Մայքըլ Ֆէլիքս անմիջապէս գգաց, որ ահաւոր մեծ սխալ մը գործած էր իր կեանքին մէջ: Ան շատ յուզուած էր: Ձղջաց, ներողութիւն խնդրեց եւ փորձեց բացատրութիւն մը տալ: Այդ նկարին բացայայտումը նոյնիսկ պահ մը մտածել տուաւ քաջուիլ ասպարէզէն: Բայց վերջնական որոշում մը առնելէ առաջ, դիմել իր ծնողաց եւ մարզիչ Պոպ Պոլմանին իմանալու անոնց կարծիքը:

Մենք վստահ ենք, որ անուանի մարզիկին ծնողքը եւ մարզիչը դրական պատասխան պիտի տան անոր, որ շարունակէ իր ճանապարհը եւ ուրիշ անգամ չենթարկուի այդպիսի վտանգաւոր փորձութիւններու, որ կրնան անդունդը հասցնել զինքը:

Մենք գիտենք, որ Ֆէլիքս ալ միս ոսկորէ կազմուած է եւ կ'ունենայ իր ֆիզիքական ցանկութիւնները: Սակայն, ինք լաւ պէտք է իմանայ, որ հասարակ անձ մը չէ եւ շնորհիւ իր արժանիքներուն հասած է այդտեղ: Ան շատ զգոյշ պէտք է ըլլայ, որովհետեւ որսորդ նկարչիներու - paparazzi - ոսպնակները մօտէն կը հետեւին իր բոլոր քայլերուն եւ կ'աշխատին շահիլ իրենց հացը, օգտագործելով իր սխալները, որ երբեք ու երբեք չպէտք է կրկնուին:

Ֆէլիքս 23 տարեկան հուժկու եւ բացառիկ ֆիզիքական եւ անշուշտ հոգեկան տուեաններով օժտուած երիտասարդ մըն է: Մենք կը հաւատանք, որ ան պիտի վերականգնէ եւ շրջանցէ այս կացութիւնը, որուն մատուցեալ եւ լաւ օրինակ մը պիտի հանդիսանայ երիտասարդութեան վերադառնալ յաղթական բեմասարթակները:

Ա.Մ. Նահանգներու լողորդութեան ֆէտէրասիոնը միայն երեք ամիսով կախակայեց մարզիկը առանց վճարումի, visa եւ omega հաստատութիւնները կը յարգեն իրենց պայմանագրութիւնները եւ թիկունք կը կանգնին անոր: Միայն, հացահատիկի kellogg ընկերութիւնը

Չնշեց իր ընդունած որոշումը:

Պէտք է բնութագրել, որ պարզ մարզիկ եւ ուրիշ անուանի դէմքեր ենթարկուած են վերոյիշեալ փորձութեան եւ ապա գորաւոր կամքի ուժով եւ հաւատքով վերականգնած եւ սրբագրած իրենց սխալը:

Օրինակ, աշխարհաչափ արժանիքի ֆուլթայլիստ Տիեկո Մարտոնան, եղաւ ժամանակ մը, որ ան շփացած իր համբաւով եւ շահած միլիոններով միւրճուեցաւ զեխ կեանքի մը ինչպիսի թմրեցուցիչներու գիրկը եւ զլիակորոյս դարձած էր:

Առիթով մը Մարտոնա եկած էր Ուրուկուայ եւ շրջապատուած գեղանի կիներով կը վայելէր իր կեանքը: Թմրեցուցիչներու գործածութիւնը զինքը հասցուցած էր մահուան դուռը: Ուրուկուայի նոր վկայեալ բժիշկ մը շտապ օգնութեան հասնելով յայտնեց, որ Մարտոնան պէտք է շուտով փոխադրուի հիւանդանոց: Անոր մօտիկ բարեկամները հակառակեցան առարկելով, որ բոլոր աշխարհը կ'իմանայ այս մասին: Ի տես այս կեցուածքի բժիշկը ըսաւ, ուրեմն պատրաստեցէք Մարտոնայի յուղարկաւորութիւնը:

Անուանի ֆուլթայլիստը հասցուցին հիւանդանոց: Լրագրողները խուժեցին չոն: Վլլլուկը փրթաւ բայց Մարտոնան փրկուեցաւ ստոյգ մահէ:

Երեսուն միլիոն արժանիքիները ներեցին անոր, որովհետեւ Մարտոնան իր ժողովուրդին պարգեւած էր 1986 աշխարհի ֆուլթայլի արտոյանութիւնը եւ այլ բազմաթիւ յաղթանակներ: Այսօր անոր վստահուած է Արժանիքի ազգային հաւաքականի մարզիչի պաշտօն եւ պիտի առաջնորդէ իրենք 2010ի Ափրիկէի մոնտիալին: Այս բոլորը եղան որովհետեւ արժանիքիները կուրքը սրբագրեց իր կեանքը եւ հրաժարեցաւ այդ յոռի մոլութենէն:

Մենք կը խորհինք որ պարագան նոյնն է Մ. Ֆէլիքսի համար եւ կը հաւատանք որ ան անյապաղ կը սրբագրէ իր մեծ սխալը եւ այդ պղտը կը թօթափէ իր ուսերէն եւ մաքրամաքուր կը վերադառնայ հրապարակաւ իր նոր նուաճումներով մոռացութեան կը մատնէ պատահածը: 2012 Լոնտոնի ողիմպիականի լողաւազանները կը սպասեն համակրելի հերոս մարզիկին, նոր դափնեպսակներով օժտուելու համար, ի փառս իր անձին, ընտանիքին եւ Ա. Մ. Նահանգներու սիրելի հայրենիքին:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՅՈՒՆԱ-ՀՌՈՍԵԱԿԱՆ ԸՄԲՇԱՄԱՐՏԻ ՀԱԻՔԱԿՍԱՆԸ Յ-ՐԴՆ Է ԱՇԽԱՐՀՈՒՄ

Յունահոռմէական ոճի Հայաստանի հաւաքականը Ֆրանսայում կայացած աշխարհի գաւաթի խաղարկութիւնում նուաճել է պրոնզէ մետալներ: Յ-րդ տեղի համար մրցամարտում հայ ըմբիշները առաւելութեան են հասել Քուպայի նկատմամբ:

Աշխարհի 8 ուժեղագոյն հաւաքականների մասնակցութեամբ էին մրցաշարում:

Հայաստանը Ա խմբում գրաւել էր 2-րդ հորիզոնականը եւ իրաւունք ստացել պայքարել պրոնզէ մետալների համար: Բ խմբից նման իրաւունք էր ստացել Քուպան: Յ-րդ տեղի մրցաշարում 7 քաջային կարգերից 5-ում յաղթեցին Հայաստանի հաւաքականի անդամները, իսկ միւս 2-ում՝ Քուպան:

Իսկ արտոյանի կոչումը նուաճեց Ռուսաստանի հաւաքականը, որ եզրափակիչում 5:2 հաշուով առաւելութեան հասաւ Ֆրանսայի նկատմամբ: Ռուսների յաղթանակը նախքան մրցաշարի մեկնարկը կասկած չէր յարուցում:

Հայաստանի հաւաքականը ընդհանուր առմամբ յաջող հանդէս եկաւ: Խմբային մրցաշարում հայ ըմբիշները 4:3 հաշուով առաւելութեան հասան Ատրպէյճանի նկատմամբ, 6:1 հաշուով Չինաստանի հոնգկոնցիներին եւ գիշեցին միայն ուսաներին: Պէտք է ընդգծել նաեւ, որ Հայաստանի հաւաքականը ելույթ էր ունենում ոչ մարտական կազմով: Հաւաքականի գլխաւոր մարզիչ Լեւոն Զուլֆալակեանը իրենց դրսեւորելու հնարաւորութիւն էր տուել մի շարք նորեկների:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԾԻՏՈՅԻՍՏ ՅՈՎՀԱՆՆԵՍ ՀԱԻԹԵԱՆ ՆՈՒԱՃԵՑԻՆ ԱՐԾԱԹԵ ՄԵՏԱԼ

Վարչապետը աւարտուեց ճիւտոյի աշխարհի գաւաթի 2-րդ փուլը: Եթէ առաջինում Հայաստանի հաւաքականը մետալի չէր արժանացել, ապա 2-րդ փուլում Յովհաննէս Դաւթեանը արծաթէ մետալի արժանացաւ:



Սպասելիքներ կային 60 եւ 66 կգ քաջային կարգերից, որտեղ ելույթ էին ունենում Հայաստանի հաւաքականի առաջատարներ Յովհաննէս Դաւթեանը եւ Արմէն Նազարեանը: 60 կգ քաջային Յովհաննէս Դաւթեանը բաւական յաջող ելույթ ունեցաւ: Նախնական փուլերում վստահ յաղթանակներ տօնելուց յետոյ Յովհաննէսը քառորդ եզրափակիչում պարտութեան մատնեց Վրաստանի ներկայացուցիչ Նեստոր Խերշիանիին: Կիսաեզրափակիչում Դաւթեանը առաւելութեան հասաւ Ուկրաինայի ներկայացուցիչ Գէորգի Զանտարայի նկատմամբ եւ դուրս եկաւ եզրափակիչ: Հայ ճիւտոյիստի յաղթարշաւը կասեցրեց իտալացի էլիթ Վերդէն, որը եզրափակիչում յաղթելով Դաւթեանին՝ գրաւեց առաջին հորիզոնականը:

60 կգ քաջայինների պայքարում հանդէս եկաւ նաեւ Արթուր Սրապեանը, որը քառորդ եզրափակիչում գիշեց հունգարացի Լազցօ Բուրեանին եւ գրաւեց 5-րդ հորիզոնականը:

66 կգ քաջայինների պայքարում Հայաստանի ներկայացուցիչներ Համբարձում Տոնոյեանը եւ Արմէն Նազարեանը պարզապէս ձախողուցին: Հայ ճիւտոյիստները պարտուեցին հենց առաջին փուլում:

Անյաջող էր նաեւ 73 կգ քաջային Արտիոմ Բաղդասարեանի ելույթը, որը 1/8-րդ եզրափակիչում պարտուեց իսրայէլի ներկայացուցիչ Յոնի Ռազվոգովին:

ԱՇՈՏ ԴԱՆԻԷԼԵԱՆԻ ՌԵԿՈՐԴԸ ԳԵՐԱԶԱՆՑՈՒԵՑ

Երեւանում աւարտուեց Հայաստանի ծանրամարտի տղամարդկանց եւ կանանց առաջնութիւնները, որոնցում գրանցուեցին նաեւ հանրապետութեան նոր ռեկորդներ: Հայաստանի ծանրամարտի ֆեդերացիայի գլխաւոր քարուղար Փաշիկ Ալավերդեանը «Ա+» յայտնեց, որ ռեկորդները բարելաւել են ծանր քաջային կարգերում:

Մասնաւորապէս՝ գերծանր քաջային կարգում Ռուբեն Ալեքսանեանը, պոկում վարժութիւնում բարձրացնելով 190 կգ, սահմանել է Հայաստանի երիտասարդների նոր ռեկորդը: Նախկին ռեկորդը պատկանում էր Աշոտ Դանիլեանին: Ալեքսանեանը ռեկորդ է սահմանել նաեւ երկամարտի 369 կգ արդիւնքով: Երիտասարդ ծանրորդը, դառնալով Հայաստանի մեծահասակների արտոյան, հաւանաբար կ'ընդգրկուի ազգային հաւաքականում:

Հայաստանի նոր ռեկորդ սահմանեց նաեւ 105կգ քաջային Արթուր Բաբայեանը, որը պոկում վարժութիւնում բարձրացրեց 181 կգ եւ 1 կգ-ով բարելաւեց նախկին ռեկորդը: Այս քաջային կարգում Բաբայեանը արտոյանի կոչումը նուաճեց նաեւ երկամարտի արդիւնքով:

85 կգ քաջայինների Ախոյեանի կոչումը նուաճեց երիտասարդ ծանրորդ Արամ Ադրիկեանը: Օլիմպիական խաղերի մէկ այլ մետալակիր Տիգրան Գ. Մարտիրոսեանը առաջին անգամ հանդէս եկաւ 77 կգ քաջայինների պայքարում: Մարտիրոսեանի նորամուտը այս քաջային կարգում յաջող ստացուեց: Մարտիրոսեանը դարձաւ արտոյան:

56 կգ քաջայինների պայքարում արտոյան դարձաւ Վարազդատ Սեպուհեանը, 62 կգ քաջային կարգում՝ Վանիկ Աւետիսեանը, 69 կգ քաջային կարգում՝ Գէորգ Կակոյեանը, 94 կգ-ում՝ Էդգար Գէորգեանը:

Կանանց պայքարում անակնկալներ չգրանցուեցին: Ինչպէս միշտ Մելինէ Դալուգեանը մրցակցութիւնից դուրս էր 63 կգ քաջայինների պայքարում: Նազիկ Ալզալեանը արտոյան դարձաւ 75 կգ-ում, Հռիփսիմէ Խուրշուդեանը՝ 75կգ-ից բարձր քաշում: